

2017

Կ. Ի. ԼԵՆԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ  
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1940

3K23

Ռ-95



Արմ.  
3-5110a

01 JUN 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՍՅԵՔ

3K23  
Ռ-95

14 NOV 2009

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

## ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ- ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ





2017

11 SEP 2013

«ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ԲՐՈՇՅՈՒՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ուղիղ հինգ տարի է անցել այն օրից, երբ դրվել է այս բրոշյուրը, որ այժմ լույս է տեսնում երկրորդ հրատարակութամբ ազիտացիայի կարիքների հետևանքով: Այս կարճ ժամանակամիջոցում մեր երիտասարդ բանվորական շարժումն այնպիսի հսկայական քայլ է արել դեպի առաջ, ուսական սոցիալ-դեմոկրատիայի դրուժյան և նրա ուժերի վիճակի մեջ տեղի են ունեցել այնպիսի խոր փոփոխություններ, որ, թերևս, տարրերնակ է թվում, թե ինչպես կարող էր հին բրոշյուրի պարզ արտատպություն կարիք դառցվել: Մի՞թե «Ռուսական սոցիալ-դեմոկրատները խնդիրները» 1902 թվին բնավ փոփոխություն չեն կրել 1897 թ. համեմատությամբ: Մի՞թե ոչ մի քայլ առաջ չեն շարժվել իր իսկ՝ հեղինակի այդ մասին ունեցած հայացքները, որն այն ժամանակ դեռ նոր էր ամփոփում իր պարտիական դործունեություն «առաջին փորձը»:

Այսպիսի (կամ սրանց նման) հարցեր հավանաբար կծագեն շատ ընթերցողների մոտ, և այդ հարցերին պատասխանելու համար մենք պետք է մատնանշենք «Ի՞նչ անել»<sup>1</sup> բրոշյուրը և այնտեղ առաջներից պետք է լրացնենք որոշ բաներ, մատնանշենք, որպեսզի յուրյց տանք, թե հեղինակն ինչպես է շարադրել իր հայացքները սոցիալ-դեմոկրատիայի ժամանակակից խնդիրների մասին, այսինքն՝ լրացնենք այն, ինչ այնտեղ (էջ 31—32, 121, 138)\* ասված է այն պայմանները մասին, որոնց մեջ դրվել է այժմ վերահրատարակվող բրոշյուրը, և այդ բրոշյուրի վերաբերմունքի մասին դեպի ուսական սոցիալ-դեմոկրատիայի դարդացման հատուկ «ժամանակաշրջանը»: Մատնանշված բրոշյուրում («Ի՞նչ անել») ես առհասարակ թվել եմ այդպիսի չորս ժամանակաշրջան:

\* Տե՛ս Երկերի IV հատորը, սուս. հրատ. էջ 395—396, 482, 499: Խմբ.:



5468 7.

В. И. ЛЕНИН  
ЗАДАЧИ РУССКИХ  
СОЦИАЛ-ДЕМОКРАТОВ

ջան, ընդ որում վերջին ժամանակաշրջանը վերագրել են «ներկայի, մասամբ էլ ապագայի շրջանին», երրորդ ժամանակաշրջան է կոչված «սոստեսական» ուղղության տիրապետությունը (կամ դրան լայն տարածումը), սկսած 1897—98 թվականից, երկրորդ ժամանակաշրջան՝ 1894—98 թվականները և առաջին ժամանակաշրջան՝ 1884—1894: Երկրորդ ժամանակաշրջանում, ի տարբերություն երրորդ ժամանակաշրջանից, մենք իրենց իսկ սոցիալ-դեմոկրատներին միջև տարածայնություններ չենք նկատում: Սոցիալ-դեմոկրատիան այն ժամանակ պաշտօնաբար պես միասնական էր, և հենց այն ժամանակ էլ փորձ արվեց նաև պրակտիկ, կազմակերպական միասնություն ձևով բերել (Ռուս. Ս. Գ. Բ. պարտիա կազմել): Այն ժամանակ սոցիալ-դեմոկրատներին զբաղվող ուղղությունն ուղղված էր ոչ թե դեպի այս կամ այն պարտիական ներքին հարցի պարզումն ու լուծումը (ինչպես երրորդ ժամանակաշրջանում), այլ մեկ կողմից՝ դեպի դադարաբաժան պայքարը սոցիալ-դեմոկրատիայի հակառակորդներին դեմ, մյուս կողմից՝ դեպի պրակտիկ պարտիական աշխատանքի զարգացումը: Սոցիալ-դեմոկրատներին, թեորիայի ու պրակտիկայի միջև չկար այն անտառգոնիզմը, որ դոյություն ուներ «էկոնոմիզմի»<sup>2</sup> ժամանակաշրջանում:

Ներկա բրոշյուրն էլ հենց իր մեջ արտացոլում է սոցիալ-դեմոկրատիայի այն ժամանակվա դրուժյան և այն ժամանակվա «ինդիքներին» առանձնահատկությունները: Բրոշյուրը կոչ է անում խորացնելու և ընդլայնելու պրակտիկ աշխատանքը, դրա դեմ ոչ մի «արգելք» չտեսնելու այն բանում, որ չեն պարզաբանված որևէ ընդհանուր հայացք, սկզբունք՝ և թեորիա, չտեսնելով (այն ժամանակ դոյություն չունեցող) դժվարություն զարգացական և սոստեսական պայքարը զուգորդելու մեջ: Բրոշյուրն իր սկզբունքային պարզաբանումներով դիմում է սոցիալ-դեմոկրատիայի հակառակորդներին, նարոդովոլականներին և նարոդոպրակականներին, աշխատելով ցրել այն թյուրիմացություններն ու նախապաշարմունքները, որոնք նրանց ստիպում են հեռու մնալ նոր շարժումից:

Եվ ահա այժմ, երբ «էկոնոմիզմի» ժամանակաշրջանը, ինչպես երևում է, մոտենում է իր վախճանին, սոցիալ-դեմոկրատներին դիրքը նորից նման է դուրս գալիս այն դիրքին, որ կար սրանից հինգ տարի առաջ: Իհարկե, մեր առաջ այժմ դրված խնդիրները, այդ ժամանակամիջոցում շարժման կատարած հսկայական աճման համեմատ, անչափ ավելի բարդ են, — քայքայ ներկա

մոմենտի հիմնական առանձնահատկությունները վերարտադրում են, ավելի լայն հիմքի վրա և ավելի մեծ մասշտաբով, «երկրորդ» ժամանակաշրջանի առանձնահատկությունները: Մեր թեորիայի, ծրագրի, տակտիկական խնդիրների և պրակտիկայի միջև եղած անհամապատասխանությունն անհետանում է էկոնոմիզմի անհետացմանը զուգընթաց: Մենք դարձյալ համարձակորեն կարող ենք և պետք է կոչ. անենք խորացնելու և ընդլայնելու պրակտիկ աշխատանքը, որովհետև այդ աշխատանքի թեորիական նախադրյալների մաքրումը զգալի չափով արդեն կատարված է: Մենք դարձյալ պիտի հատուկ ուշադրություն դարձնենք Ռուսաստանի ոչ-սոցիալ-դեմոկրատական անլեզալ ուղղությունների վրա, ընդ որում մեր առաջ նորից դուրս մնալիս նույն, ըստ էության, — միայն ավելի զարգացած, ձևակերպված, «հասուն» ուղղությունները, ինչպես և անցյալ դարի 90-ական թվականների առաջին կիսում:

Նարոդովոլականներն իրենց հին զգեստները դեն նետելու պրոցեսում հասան սոցիալիստ-ուկոլոցիոնիստների»<sup>3</sup> վերածվելու և, կարծես հենց այդ անունով ցույց տալով, որ նրանք կանգ են առել կիսաճանապարհին: Հնից («ռուսական» սոցիալիզմից) նրանք հեռացել են, իսկ նորին (սոցիալ-դեմոկրատիային) չեն մոտեցել: Ռուկոլցիոն սոցիալիզմի այն միակ թեորիան, որ միայն ժամանակակից մարդկությանը հայտնի է, այսինքն մարքսիզմը, նրանք արխիվ են հանձնում բուրժուական («սոցիալիստների») և օպորտունիստական («ուկոլոցիոնիստների») քննադատություն հիման վրա: Գաղափարազրկությունն ու անսկզբունքայնությունը պրակտիկայում նրանց տանում են դեպի «ուկոլոցիոն ավանտյուրիզմ», որն արտահայտվում է թե՛ նրանով, որ նրանք ձգտում են այնպիսի սոցիալական խավեր ու դասակարգեր, ինչպես ինտելիգենցիան, պրոլետարիատը և գյուղացիությունը, միևնույն շարքը դասելու, թե՛ «սիստեմատիկ» տեորի նրանց արձկալի քարոզի մեջ, թե՛ նրանց նշանավոր ազգաբային ծրագիր-միտիմումի մեջ (հողի սոցիալիզացիա, — կոոպերացիաներ, — հողաթնին ամրացնելը: Տե՛ս «Искра»<sup>4</sup> № 23 և 24)<sup>5</sup>, և թե՛ դեպի լիբերալներն ունեցած նրանց վերաբերմունքի մեջ (տե՛ս «Рев. Рок.» № 9 և պ. Ժիալովսկու<sup>6</sup> ակցենդան «Освобождение»<sup>7</sup> ժուռնալի մասին «Socialistische Monatshefte»-ի մեջ) և ուրիշ շատ բաների մեջ, որոնց առթիվ մենք հավանաբար դեռ բազմիցս

\* Տե՛ս Երկերի V հատորը, ռուս. հրատ. էջ 143: Խմբ.:



ստիպված պիտի լինենք խոսելու: Ռուսաստանում դեռ այնքան շատ են սոցիալական այն տարրերն ու պայմանները, որոնք ինտելիգենտական անկայունություն են սնում, որոնք ռազիկալ կերպով տրամադրված անձերի մեջ ցանկություն են առաջ բերում մեռած հինը և անկենդան մոդայականը դուզողը: Որոնք նրանց խանդարում են իրենց գործը միաձուլելու իր դասակարգային պայքարը մոլոր պրոլետարիատի հետ, — որ ռուսական սոցիալ-դեմոկրատիան դեռ ստիպված պիտի լինի հաշվի առնելու «սոցիալ-ուղղությունը» ուղղությունը կամ նրա նման ուղղությունները, ինչպես որ կապիտալիստական էվոլյուցիան և դասակարգային հակասությունների սրումը նրանցից կխլի ամեն մի հող:

Նարոդոպրավականները, որոնք 1897 թ. աչքի էին ընկնում ոչ-պակաս անորոշությամբ (սե'ս ստորև, էջ 20—22)\*, քան այժմյան սոց-ուղղությունները, այդ պատճառով շատ շուտ հեռացան ասպարեզից: Սակայն քաղաքական ազատության պահանջը՝ սոցիալիզմից միանգամայն անջատելու նրանց «զգաստ» իդեան՝ չի մեռել և չէր կարող մեռնել, որովհետև Ռուսաստանում շատ ուժեղ են և քանի դեռում՝ ուժեղանում են լիբերալ-դեմոկրատական հոսանքները խոշոր և մանր բուրժուազիայի ամենատարբեր խավերի մեջ: Ուստի նարոդոպրավականների օրինական ժառանգը, նրանց որոշակի, հետևողական, հասուն շարունակողը հանդիսացավ լիբերալ «Освобождение»-ն, որը ցանկանում է իր շուրջը համախմբել Ռուսաստանի բուրժուական օպոզիցիայի ներկայացուցիչներին: Եվ որքան անխուսափելի է հին մինչդեռման Ռուսաստանի, նահապետական գյուղացիության, թե՛ համայնքով ու դյուրատնտեսական կոոպերացիաներով և թե՛ «անորսելի» տեռորով հավասարապես տարվելու ընդունակ հին տիպի ինտելիգենցիայի թառամումն ու անհետացումը — նույնքան էլ անխուսափելի է կապիտալիստական Ռուսաստանի ունեւոր դասակարգերի՝ բուրժուազիայի ու մանր բուրժուազիայի աճումն ու հասունացումը, իրենց զգաստ լիբերալիզմով, որը սկսում է դիտակցել, թե հաշիվ չէ պահել բուրժուազիաների, թանգ արժեցող և սոցիալիզմից բնավ չպաշտպանող միահեծան կառավարությունը, — դասակարգային պայքարի և դասակարգային տիրապետության եվրոպական ձևերի իրենց պահանջով, — իրենց բուրժուական դասակարգային շահերը դասա-

վարդային պայքարն առհասարակ ժխտելու միջոցով քողարկելու իրենց բնածին ձգտումով (պրոլետարիատի արթնացման ու աճման հպոխմայում):

Այդ պատճառով մենք հիմք ունենք շնորհակալ լինելու պալլիբերալ կալվածատերերից, որոնք փորձում են հիմնել «զեմստվային կոնստիտուցիոն պարտիա»: Նախ — սկսենք ամենաքիչ կարևորից — մենք նրանցից շնորհակալ կլինենք, որ նրանք ռուսական սոցիալ-դեմոկրատիայից վերցրին պ. Ստրովեին<sup>8</sup>, նրան վերջնականապես վերածելով քվադր-մարքսիստից լիբերալի, օգնելով մեզ կենդանի օրինակով ցույց տալու բոլորին և յուրաքանչյուրին առհասարակ բերնշտայնականություն<sup>9</sup> և հատկապես ռուսական բերնշտայնականության իսկական նշանակությունը: Երկրորդ, ձգտելով ռուսական բուրժուազիայի դանազան խավերը դարձնել դիտակցական — լիբերալ խավեր, «Освобождение»-ն դրանով իսկ մեզ կօգնի արագացնելու բանվորների հետզհետե ակիլի ու ակիլի մեծ մասսայի վերածումը դիտակցական սոցիալիստների: Մեղանում այնքան շատ ճապաղ, լիբերալ-նարոդնիկական քվադր-սոցիալիզմ է եղել և կա, որ նրա հետ համեմատած նոր լիբերալ ուղղությունը մի ակներև քայլ է դեպի առաջ: Այժմ այնպես հեշտ կլինի բանվորների առաջ ակնառու կերպով ցուցադրել ռուսական լիբերալ ու դեմոկրատական բուրժուազիային, պարզաբանել ինքնուրույն բանվորական քաղաքական պարտիայի միջադրային սոցիալ-դեմոկրատիայի հետ միասնություն կազմող պարտիայի անհրաժեշտությունը, — այժմ այնպես հեշտ կլինի ինտելիգենտներին մոչ անել իրենց դիրքը որոշելու վճռականորեն — լիբերալիզմ կամ սոցիալ-դեմոկրատիա, — կիսատ-պուատ-թեորիաներն ու ուղղություններն այնքան արագ կերպով կաղաղվեն աճող ու ուժեղացող այս երկու «անտիպոզների» երկանաքարերով: Երրորդ, — և այս, իհարկե, ամենակարևորն է, — մենք լիբերալներից շնորհակալ կլինենք, եթե նրանք իրենց օպոզիցիայով խախտեն ինքնակալության դաշինքը բուրժուազիայի և ինտելիգենցիայի սրբոշ խավերի հետ: Մենք ասում ենք «եթե», որովհետև ինքնակալության հետ արած իրենց կոկետությունը, խաղաղ կոլտուրական աշխատանքի իրենց փառաբանությունը, «տեղեկացիոց» ուղղությունների դեմ մղած իրենց պատերազմով և այլն, լիբերալները խախտում են ոչ այնքան ինքնակալությունը, որքան ինքնակալության դեմ մղվող պայքարը: Անշեղորեն և անհաշտ կերպով մերկացնելով լիբերալների ամեն մի կիսատ-պուատություն, կառավարության հետ սիրակաղ անելու նրանց ամեն մի

\* Տե՛ս Երկերի II հատորը, ռուս հրատ. էջ 184—185: Այս հրատարակության մեջ տե՛ս էջ 29—30: Խմբ.:

փորձ, մենք հենց դրանով կթուլացնենք պարոնայք լիբերալ բուրժուաների քաղաքական դործունեության աչք դալաճանական կողմը, մենք հենց դրանով կընդարմացնենք նրանց ձախ ձեռքը և կասպահովենք նրանց աջ ձեռքի աշխատանքի առաջխաղաչն արդյունքները:

Այսպիսով թե՛ նարդոսյութականները և թե՛ նարդոսյութականները շատ մեծ քայլեր են արել դեպի առաջ իրենց իսկական ճգնաժամները և իրենց իսկական էութունը զարգացնելու, որոշելու և ձևակերպելու խմաստով: Այն պայքարը, որ անցյալ դարի 90-ական թվականների առաջին կեսին մի պայքար էր ունեցողի տերիտորիալ ժողովրդի խմբակների միջև, այժմ վերսկսվում է սրպես հասուն քաղաքական ուղղութիւնների և իսկական քաղաքական պարտիաների մտնական պայքար:

Այս պատճառով «Խնդիրները» վերահրատարակումը դուրսն ուղարկող չլինի նաև այն տեսակետից, որ պարտիայի երկտասարդ անդամներին կհիշեցնի նրա մոտիկ անցյալը, ցույց կտա սոցիալ-դեմոկրատներին՝ ուրիշ ուղղութիւնների մեջ ունեցած այն դրության ծաղուճը, որ լիովին որոշակի է դարձել միայն այժմ, կողմի ավելի պարզ և հստակ պատկերացնելու ժամանակակից մոմենտի ըստ էության միատեսակ, բայց ավելի բարդ «խնդիրները»:

Սոցիալ-դեմոկրատիայի առաջ այժմ մի առանձին ուժով խնդիր է ծաղուճ վերջ տալու իր ներսում եղած աճեն տեսակ տարրնթացության ու տատանման, ավելի սերտ համախմբվել և կադմակերպորեն միաձուլվել ունեցողի մարքսիզմի դրոշմ տակ, — բոլոր ջանքերն ուղղել պրակտիկ աշխատանք կատարող բոլոր սոցիալ-դեմոկրատներին միացնելու համար, նրանց դործունեութունը խորացնելու և ընդլայնելու համար, իսկ դրա հետ միասին լուրջ ուշադրութիւն դարձնել, որպեսզի ինտելիգենտների և բանվորների հնարավորին չափ ավելի լայն մասնաւոր պարզաբանի վերահիշյալ այն երկու ուղղութիւնների իսկական նշանակութիւնը, որոնց սոցիալ-դեմոկրատիան վաղուց արդեն ստիպված է հաշի առնելու:

1902 թ. Օգոստոս:

Առաջին անգամ տպագրվել է 1902 թ. գեկտեմբերին «Լիգայի» հրատարակած բրոշյուրում:

## «ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԲՐՈՇՅՈՒՐԻ ԵՐՐՈՐԴ ԷՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս բրոշյուրը երրորդ հրատարակութիւնը լույս է տեսնում Ռուսաստանում ունեցողիայի զարգացման այնպիսի մոմենտում, որը էսպես տարբերվում է 1897 թվից, երբ այս բրոշյուրը գրվել է, և 1902 թվից, երբ լույս տեսավ սրա երկրորդ հրատարակութիւնը: Ինչ խոսք, որ բրոշյուրը տալիս է միայն առհասարակ սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների ընդհանուր ուղղադիրձը, և ոչ թե այն ժամանակակից խնդիրների կոնկրետ մատնանշումը, որոնք համապատասխանում են բանվորական և ունեցողի տերիտորիայի այժմյան դրությանը, ինչպես և Ռուսաստանի Ս. Դ. Բանվորական Պարտիայի վիճակին: Մեր պարտիայի ժամանակակից խնդիրներին ես նվիրել եմ «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ունեցողիայի մեջ»<sup>10</sup> (Ժընև, 1905 թ.) բրոշյուրը: Երկու բրոշյուրների համեմատութիւնից ընթերցողները կարող են դադարաւար կազմել այն մասին, թե արդյոք հեղինակի հայացքները սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր խնդիրների և տվյալ մոմենտի հատուկ խնդիրների մասին հետևողական կերպով են զարգացել: Որ այդպիսի համեմատութիւնն անողուտ չէ, այդ իմիջի այլոց երևում է մեր լիբերալ-միապետական բուրժուազիայի առաջնորդ պն Մորուլիի ելույթից, որը «Освобождение» ժուռնալում ունեցողի տերիտորիային (ի դեմս ՌՄԴԲՊ III համագումարի)<sup>11</sup> մեղադրեց, թե նա բունտարական և վերացական-ունեցողի տեսական ձևով է դնում զինված ապստամբության հարցը: Մենք «Пролетарий»-ում արդեն նշել ենք (№ 9, «Революция учит»), որ «Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները» (1897 թ.), «Ի՞նչ անել» (1902 թ.) և «Пролетарий»-ի<sup>12</sup> (1905 թ.) պարզ համեմատութիւնը հերքում է օսկորոժ-դեմոկրատիկաների մեղադրանքը և ապացուցում է, որ ապստամբության վե-

րաբերյալ սոցիալ-դեմոկրատական հայացքների զարգացումը կապված է Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման զարգացման հետ: Օսվոբոժդենյականների մեղադրանքը լիբերալ միապետութան կողմնակիցների մի օպորտունիստական ելույթն է միայն, որոնք ձգտում են քողարկել իրենց դավաճանութունը ռևոլյուցիայի հանդեպ, իրենց դավաճանութունը ժողովրդի շահերի հանդեպ, ցարական իշխանության հետ դործարք կնքելու իրենց ձգտումները:

1905 թ. Օգոստոս:

Առաջին անգամ տպագրվել է 1905 թ. ՌՍ.-ԴԲՊ ԿԿ-ի հրատարակած բրոշյուրում:

## ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

90-ական թվականների երկրորդ կեսը բնորոշվում է ռուսական ռևոլյուցիոն հարցերի դրժման և լուծման ուշադրալ աշխուժացումով: Նարոդոպրավականների նոր ռևոլյուցիոն պարտիայի հրապարակ դալը, սոցիալ-դեմոկրատների աճող ազդեցութունն ու հաջողութունները, նարոդովոլյականութան ներքին էվոլյուցիան, — այս ամենն առաջ բերեց ծրագրային հարցերի աշխուժ ըննարկում ինչպես սոցիալիստներին — ինտելեկտուների ու բանվորների — խմբակներում, նույնպես և անլեզալ գրականութան մեջ: Վերջին բնագավառում արժե մատնանշել «Ժողովրդական իրավունքի»<sup>13</sup> պարտիայի «Насущный вопрос»-ը և «Манифест»-ը (1894), «Летучий Листок группы Народной Воли»<sup>14</sup>-ն, «Ռուսական սոցիալ-դեմոկրատների միութան» կողմից հրատարակվող արտասահմանյան «РАБОТНИК»<sup>15</sup>-ը, ղլխավորապես բանվորների համար ռևոլյուցիոն բրոշյուրների հրատարակութան ուժեղացող դործունեութունը Ռուսաստանում, սոցիալ-դեմոկրատական «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միութան»<sup>16</sup> ազլտացիոն դործունեութունը Ս.-Պր.ում՝ 1896 թ. պետերբուրգյան նշանավոր դործադուլների կապակցութամբ և այլն:

Ներկայումս (1897 թ. վերջը) մեր տեսակետով ամենահրատապ հարցը սոցիալ-դեմոկրատների պրակտիկ դործունեութան հարցն է: Մենք ընդգծում ենք սոցիալ-դեմոկրատիզմի պրակտիկ կողմը, որովհետև նրա թեորիական կողմը, ըստ երևութին, արդեն ապրել է հակառակորդների համառորեն չհասկանալու և նոր ուղղութունը հենց երևան դալուն պես ճնշելու սաստիկ ձգտումների ամենասուր շրջանը մեկ կողմից և սոցիալ-դեմոկրատիզմի հիմունքների ջերմ ինքնապաշտպանութան ամենասուր շրջանը մյուս կողմից: Այժմ սոցիալ-դեմոկրատների թեորիական հայացքներն իրենց գլխավոր ու հիմնական գծերով բավականաչափ պարզված են: Չի կարելի նույնն ասել սոցիալ-դեմոկրատիզմի

պրակտիկ կողմի, նրա քաղաքական ծրագրի, նրա դործունեութեան եղանակների, նրա տակտիկայի մասին: Հենց այս բնագավառումն է, որ, մեր կարծիքով, տիրում են ամենից շատ թյուրլմացություններ և փոխադարձ չհասկացողություն, որն արդելք է հանդիսանում, որ սոցիալ-դեմոկրատիզմի հետ լիովին մոտենան այն ուսուցիչներները, որոնք թեորիայում ամբողջապես հրաժարվել են նարոդոլոլյականությունից, իսկ պրակտիկայում—հենց իրերի բերմամբ կա՛մ հանդուժում են բանվորների մեջ պրոպագանդա և աշխատացի մղելուն, նույնիսկ այլևի՛ն՝ բանվորների մեջ իրենց դործունեությունը դասակարգային պայքարի հողի վրա դնելուն,—կա՛մ ձգտում են ամբողջ ծրագրի և ամբողջ ուսուցիչուն դործունեության հիմքում դնել դեմոկրատական խնդիրները: Եթե մենք չենք սխալվում, վերջին բնութագրությունը համապատասխանում է այն երկու ուսուցիչուն խմբերին, որոնք ներկայումս գործում են Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատների հետ կողք կողքի, այսինքն՝ նարոդոլոլյականներին և նարոդոպրավականներին:

Ուստի մեզ թվում է, որ առանձնապես ժամանակին է սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկ խնդիրները պարզաբանելու և այն հիմունքները շարադրելու փորձը, որոնցով մենք նրանց ծրագրերը համարում ենք առկա երեք ծրագրերից ամենաուսուցիչունը, իսկ նրա դեմ եղած առարկությունները՝ զգալի չափով հիմնված թյուրլմացության վրա:

Սոցիալ-դեմոկրատների պրակտիկ դործունեությունը, ինչպես հայտնի է, իր առաջ խնդիր է դնում ղեկավարել պրոլետարիատի դասակարգային պայքարը և կադմակերպել այդ պայքարը նրա երկու արտահայտություններով, այն է՝ սոցիալիստական արտահայտությամբ (այն պայքարը կապիտալիստների դասակարգի դեմ, որը ձգտում է տապալել դասակարգային հասարակարգը և կադմակերպել սոցիալիստական թրատողությունը) և դեմոկրատական արտահայտությամբ (այն պայքարը արտոլուտիզմի դեմ, որը ձգտում է Ռուսաստանի համար քաղաքական արտոլություն նվաճել և Ռուսաստանի քաղաքական ու հասարակական իրավակարգը դեմոկրատականացնել): Մենք առաջինք՝ ինչպես հայտնի է: Եվ իսկապես, հենց իր երևան գալու օրից, իբրև հատուկ սոցիալ-ուսուցիչուն ուղղություն, ուսական սոցիալ-դեմոկրատները միշտ լիակատար պարզորոշությամբ մատնանել են իրենց դործունեության այդպիսի խնդիրը, միշտ ընդգծել են պրոլետարիատի դասակարգային պայքարի երկակի արտահայտությունն ու բովանդա-

կությունը, միշտ պնդել են իրենց սոցիալիստական և դեմոկրատական խնդիրների անխզելի կարգ,—այն, որը ակներև արտահայտված է նրանց ընդունած անվան մեջ: Այնուամենայնիվ, մինչև այժմ էլ դուք հաճախ այնպիսի սոցիալիստների և ք հանդիպում, որոնք ամենաթյուր պատկերացում ունեն սոցիալ-դեմոկրատների մասին, մեղադրելով նրանց քաղաքական պայքարն անտեսելու մեջ և այլն: Արդ, մի վտեր կանդ առանձնք ուսական սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկ դործունեության երկու կողմերի բնութագրության վրա:

Սկսենք սոցիալիստական դործունեությունից: Սկսած այն ժամանակից, երբ Մայր-ում ս.—դ «Բանվոր դասակարգի աշխատանքային պայքարի միությունը» Պետերբուրգի բանվորների մեջ դրսևորեց իր դործունեությունը, սոցիալ-դեմոկրատական դործունեության բնույթն այդ տեսակետից, թվում է, թե պետք է լիովին պարզ լիներ: Ռուսական սոցիալ-դեմոկրատների սոցիալիստական աշխատանքը դիտական սոցիալիզմի ուսմունքների պրոպագանդան է, բանվորների մեջ միշտ ըմբռնողություն տարածելն է՝ ժամանակակից հասարակական-տնտեսական կարգի, նրա հիմունքների և նրա դարգացման մասին, ուսական հասարակության դանադան դասակարգերի մասին, նրանց փոխհարաբերության մասին, այդ դասակարգերի միջև մղվող պայքարի մասին, այդ պայքարում բանվոր դասակարգի ունեցած դերի մասին, նրա վերաբերմունքի մասին դեպի ընկնող և դարգացող դասակարգերը, դեպի կապիտալիզմի անցյալն ու ապագան, միջադարձային սոցիալ-դեմոկրատիայի և ուսական բանվոր դասակարգի պատմական խնդրի մասին: Պրոպագանդայի հետ անխղճիտորեն կապված է բանվորների մեջ ագիտացիա մղելը, բնականորեն առաջ շարժվելով դեպի առաջին պլանը Ռուսաստանի ժամանակակից քաղաքական պայքաններում և բանվորական մասսաների գարդացման մակարդակի ժամանակ: Բանվորների մեջ մղվող ագիտացիան այն է, որ սոցիալ-դեմոկրատները մասնակցում են բանվոր դասակարգի պայքարի բոլոր տարերային արտահայտություններին, բանվորական օրվա, բանվորական վարձի, աշխատանքի պայքանների և այլն և այլն պատճառներով բանվորների ու կապիտալիստների միջև տեղի ունեցող բոլոր ընդհարումներին: Մեր խնդիրն է—մեր դործունեությունը միաձուլել բանվորական կյանքի պրակտիկ, կենցաղային հարցերի հետ, օգնել բանվորներին՝ հասկանալու այդ հարցերը, բանվորների ուշադրությունը դարձնել ամենակարևոր շարարկությունների վրա, օգնել նրանց այլևի



ճիշտ և ավելի գործնականորեն ձևակերպելու տերերին ուղղած իրենց պահանջները՝ բանվորների մեջ դարգացնել իրենց համբարաշխութեան դիտակցությունը, բոլոր ուսուսական բանվորների իրրև պրոլետարիատի համաշխարհային բանակի մի մասը կազմող միասնական բանվոր դասակարգի ընդհանուր շահերի և ընդհանուր գործի դիտակցությունը: Բանվորների մեջ խմբակներ կազմակերպել, նրանց և սոցիալ-դեմոկրատների կենտրոնական խմբի միջև ճիշտ ու կոնսպիրատիվ հարաբերություններ ստեղծել, բանվորական դրականություն հրատարակել ու տարածել, բանվորական շարժման բոլոր կենտրոններից թղթակցություններ կազմակերպել, ազդիտացիոն թռուցիկներ և պրոկլամացիաներ հրատարակել ու նրանց տարածել, փորձված ազդիտատորների կոնտինդենտ պատրաստել,—սրանք են, ընդհանուր գծերով, ուսուսական սոցիալ-դեմոկրատիայի սոցիալիստական գործունեութեան արտահայտութեանները:

Մեր աշխատանքն ամենից առաջ և ամենից ավելի ուղղված է Փարբիկա-գործարանային, քաղաքային բանվորների կողմը: Ռուսական սոցիալ-դեմոկրատիան չպետք է իր ուժերը ջլատի, նա պետք է կենտրոնանա արդյունաբերական պրոլետարիատի մեջ՝ ծավալվող գործունեութեան վրա, այն պրոլետարիատի, որն ամենից հեշտ է ըմբռնում սոցիալ-դեմոկրատական գաղափարները, որը մտավորապես և քաղաքականապես ամենից ավելի դարգացած է, որն իր թվով և երկրի խոշոր քաղաքական կենտրոններում կենտրոնացվածութեամբ ամենից կարևորն է: Այդ պատճառով Փարբիկա-գործարանային, քաղաքային բանվորների մեջ ամուր ուղղված կազմակերպություն ստեղծելը սոցիալ-դեմոկրատիայի առաջին և կենսական խնդիրն է, որից ներկայումս հրատարակելը վերին աստիճանի անմտություն կլինի: Բայց ընդունելով իր ուժերը Փարբիկա-գործարանային բանվորների վրա կենտրոնացնելու անհրաժեշտությունը, դատապարտելով ուժերի ջլատումը, մենք ամենևին չենք ուզում ասել, որ ուսուսական սոցիալ-դեմոկրատիան պետք է անտեսի ուսուսական պրոլետարիատի և բանվոր դասակարգի մյուս խավերը: Ո՛չ երբեք: Ռուսական գործարանային բանվորը հենց իր կյանքի պայմաններով հարկադրված է ամեն քայլափոխում ամենասերտ հարաբերությունների մեջ մտնել տնայնագործների հետ—գործարանից դուրս քաղաքներում և գյուղերում ցրված և շատ ավելի վատթար պայմանների մեջ գրված այդ արդյունաբերական պրոլետարիատի հետ: Ռուսական գործարանային բանվորն անմիջական շփման մեջ է մտնում:

Նաև գյուղական բնակչութեան հետ (գործարանային բանվորը հաճախ ընտանիք ունի գյուղում), և, հետևապես, չի կարող չմերձենալ նաև գյուղական պրոլետարիատի, պրոֆեսիոնալ բառակների և օրամշակների քաղամիլիոն մասսայի հետ, ինչպես նաև այն քայքայված գյուղացիութեան հետ, որը կառչած իր չնչին հողատիրին, դբադված է աշխատավճարումներով և ամեն տեսակի պատահական «դատումներով», այսինքն՝ նույն վարձու աշխատանքով: Ռուսական սոցիալ-դեմոկրատներն անժամանակ են համարում իրենց ուժերն ռադիկալ տնայնագործների և գյուղական բանվորների միջավայրը, բայց նրանք ամենևին մտադիր չեն անուշադրութեան մասնելու այդ միջավայրը և կաշխատեն առաջավոր բանվորներին լուսավորել նաև տնայնագործների և գյուղական բանվորների կենցաղի հարցերի վերաբերմամբ, որպեսզի այդ բանվորները, չփման մեջ մտնելով պրոլետարիատի ավելի հետամնաց խավերի հետ, նրանց մեջ էլ մտցնեն դասակարգային պայքարի, սոցիալիզմի և ընդհանրապես ուսուսական դեմոկրատիայի գաղափարներն ու մասնավորապես ուսուսական պրոլետարիատի քաղաքական խնդիրների գաղափարները: Անդրծնական բան է տնայնագործների և գյուղական բանվորների մոտ ազդիտատորներ ուղարկելը, քանի դեռ Փարբիկա-գործարանային, քաղաքային բանվորների մեջ այնքան շատ աշխատանք է մտնում կատարելու, բայց շատ ղեկավարում սոցիալիստ-բանվորը, անկախ իր կամքից, չփվում է այդ միջավայրի հետ և նա պետք է կարողանա օգտվել այդ ղեկավարից և հասկանալ սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր խնդիրները Ռուսաստանում: Այդ պատճառով խորապես սխալվում են նրանք, ովքեր ուսուսական սոցիալ-դեմոկրատիային մեղադրում են սահմանափակվածութեան մեջ, միմիայն Փարբիկա-գործարանային բանվորների պատճառով աշխատավոր բնակչութեան մասսային անտես առնելու ձգտման մեջ: Ընդհակառակը, պրոլետարիատի առաջավոր խավերում ազդիտացիա մղելը նաև ամբողջ ուսուսական պրոլետարիատին արթնացնելու (շարժման ծավալմանը գուպընթաց) ամենաճիշտ և միակ ուղին է: Սոցիալիզմի և դասակարգային պայքարի գաղափարի տարածումը քաղաքային բանվորների մեջ՝ անկուսակցիկորեն այդ գաղափարները կատարածի նաև ավելի մանր և ավելի ճյուղավորված ստույգներով, դրա համար անհրաժեշտ է, որ մասնանշված գաղափարները խորն արմատներ գցեն ավելի պատրաստված միջավայրում և հաղթանակն ուսուսական բանվորական շարժման և ուսուսական ուղղության այդ ավանդարդին: Ուղղելով իր բոլոր ուժերը Փարբի-



կա-դործարանային բանվորներին մեջ կատարվող դործունեութեան մոտեցումը՝ ուսանական սոցիալ-դեմոկրատիան պատրաստ է աջակցելու այն ուսանական ուսուցիչներին, որոնք դործնականում մոտենում են՝ սոցիալիստական աշխատանքը սրբաբարեացիորէն դասակարգային պայքարի հողի վրա դնելուն, ընդամին բոլորովին չթաղցնելով, որ պրակտիկ ոչ մի դաշինք ուսուցիչներին մյուս Ֆրակցիաների հետ՝ չի կարող և չպետք է տանի դեպի կոմպրոմիսներ կամ դեմոկրատիկութեան թերիայում, ծրագրում, դրոշում: Համոզված լինելով, որ ուսուցիչներն շարժման համար իբրև դրոշ ծառայող ուսուցիչներ թերիա կարող է լինել ներկայումս միմիայն զիտական սոցիալիզմի և դասակարգային պայքարի ուսմունքը, ուսանական սոցիալ-դեմոկրատները բոլոր ուժերով կտարածեն այն, կպաշտպանեն կեղծ մեկնաբանութեաններին, դուրս կդան Ռուսաստանի դեռևս երիտասարդ բանվորական շարժումը պակաս որոշակի դոկտրինաների հետ կապելու ամեն տեսակ փորձերի դեմ: Թերիական նկատառումներն ապացուցում են, իսկ սոցիալ-դեմոկրատներին պրակտիկ դործունեութեանը ցույց է տալիս, որ բոլոր սոցիալիստները Ռուսաստանում պետք է սոցիալ-դեմոկրատներ դառնան:

Անցնում ենք սոցիալ-դեմոկրատներին դեմոկրատական խնդիրներին և դեմոկրատական աշխատանքին: Նորից ենք կրկնում, որ այդ աշխատանքն անխզելիորեն կապվում է սոցիալիստական աշխատանքի հետ: Բանվորներին մեջ պրոպագանդա մղելով, սոցիալ-դեմոկրատները չեն կարող անտեսել քաղաքական հարցերը և դրանք անտեսելու կամ նույնիսկ դրանք հետ տանելու ամեն մի փորձ կհամարեն մեծագույն սխալ և նահանջ համաշխարհային սոցիալ-դեմոկրատիզմի հիմնական դրույթներին: Գիտական սոցիալիզմի պրոպագանդայի հետ միասին ուսանական սոցիալ-դեմոկրատներն իրենց խնդիրն են համարում նաև դեմոկրատական գաղափարների պրոպագանդա մղել բանվորական մասսաների մեջ, տարածել հասկացողութեան արտաբերումի մասին՝ նրա դործունեութեան բոլոր արտահայտութեաններում, նրա դասակարգային բովանդակութեան մասին, նրան տարաբանում անհրաժեշտութեան մասին, բանվորական դործի համար հաջող պայքարելու անհրաժեշտութեան մասին՝ առանց քաղաքական ադատութեան ձեռք բերելու և Ռուսաստանի քաղաքական ու հասարակական կարգը դեմոկրատացնելու: Մերձավորագույն տնտեսական պահանջների հողի վրա բանվորներին մեջ ազիտացիա մղելով, սոցիալ-դեմոկրատները դրա հետ սերտորեն կապում են նաև բանվոր դասակարգի

մերձավորագույն քաղաքական կարիքներին, փորձութեաններին և պահանջներին հողի վրա մղվող ազիտացիան, — ազիտացիան ընդդեմ վոստիկանական ճնշման, որն արտահայտվում է յուրաքանչյուր դործագույնի մեջ, բանվորներին յուրաքանչյուր ընդհարման մեջ կապիտալիստներին հետ, — ազիտացիան բանվորներին՝ ընդհանրապես որպես ուսանական քաղաքացիներին և մասնավորապես որպես ամենամեծ ճնշման և ամենախրախուրդ դասակարգի իրավունքներին սահմանափակման դեմ, — ազիտացիան արտաբերումի յուրաքանչյուր ակնավոր ներկայացուցչի և լակիի դեմ, որն ամենամոտիկ շփման մեջ է մտնում բանվորներին հետ և ակնառու ցույց է տալիս բանվոր դասակարգին նրա քաղաքական ստրկութեանը: Եթե անտեսական բնագավառում չկա բանվորական կյանքի վերաբերյալ մի այնպիսի հարց, որն օգտագործման ենթակա չլինի անտեսական ազիտացիայի համար, ճիշտ այդպես էլ քաղաքական բնագավառում չկա նաև այնպիսի հարց, որը քաղաքական ազիտացիայի առարկա չծառայի: Ազիտացիայի այդ երկու տեսակները սոցիալ-դեմոկրատներին դործունեութեան մեջ անբախտելիորեն կապված են, ինչպես մի մեղալի երկու երեսները: Թե՛ անտեսական և թե՛ քաղաքական ազիտացիան հավասարապես անհրաժեշտ են պրոպագանդային ինքնազիտակցութեան դարձացման համար. թե՛ անտեսական և թե՛ քաղաքական ազիտացիան հավասարապես անհրաժեշտ են իբրև ուսանական բանվորներին դասակարգային պայքարի դեմոկրատիզմի, որովհետև յուրաքանչյուր դասակարգային պայքար քաղաքական պայքար է: Թե՛ մեկ և թե՛ մյուս ազիտացիան, արթնացնելով բանվորներին զիտակցութեանը, կազմակերպելով, զիտցելով նրանց ենթարկելով նրանց, դասախրախուրդում նրանց համերաշխ դործունեութեան համար և հանուն սոցիալ-դեմոկրատական իդեալներին պայքարելու համար, բանվորներին հնարավորութեան կտա իրենց ուժերը փորձելու մերձավորագույն հարցերում, մերձավորագույն կարիքներում, նրանց հնարավորութեան կտա իրենց թշնամուց մասնակի դեմոկրատներ ձեռք բերելու, բարելավելով իրենց անտեսական դրույթները, հարկադրելով կապիտալիստներին հաշի առնելու կազմակերպված բանվորների ուժը, հարկադրելով կառավարութեանը ընդարձակելու բանվորներին իրավունքները, լսելու նրանց պահանջները, կառավարութեանը մշտական երկյուղի մեջ պահելով թշնամարար տրամադրված բանվորական մասսաների հանդեպ, որոնց դեմոկրատիզմ է սոցիալ-դեմոկրատական ամուր կազմակերպութեանը:

Մերձավորագույն





Մենք մատնանշեցինք սոցիալիստական և դեմոկրատական պրոպագանդայի և ազխտացիայի անբաժան մոտիկութունը, ուսուցիչին աշխատանքի լիակատար ղուգահեռութունը թե՛ մեկ և թե՛ մյուս ոլորտում: Բայց գործունեութեան և պայքարի երկու տեսակների միջև կա նաև խոշոր տարբերություն: Այդ տարբերությունն այն է, որ տնտեսական նյայքարում պրոլետարիատը բոլորովին միայնակ է: Կանգնած, իր դեմ՝ ունենալով թե՛ հողատեր-ազնվականներին, թե՛ բուրժուազիային, օգտվելով միայն (և այն էլ բնավ ոչ միշտ) մանր բուրժուազիայի այն տարրերի աջակցությունից, որոնք հակված են դեպի պրոլետարիատը: Մինչդեռ գեմոկրատական, քաղաքական պայքարում ուսուցիչն ունի դասակարգը միայնակ չէ կանգնած. նրա հետ կողք-կողքի կանգնում են քաղաքականապես օպոզիցիոն բոլոր տարրերը: Բնակչության խավերն ու դասակարգերը, որչափով նրանք թըշնամի են արքսոլուտիզմին և նրա դեմ պայքար են մղում այս կամ այն ձևով: Պրոլետարիատի հետ կողք-կողքի այստեղ կանգնած են նաև բուրժուազիայի, կամ կրթված դասակարգերի, կամ մանր բուրժուազիայի, կամ արքսոլուտիզմի կողմից հետապնդվող ժողովուրդների կամ կրոններին և աղանդների օպոզիցիոն տրամադրված տարրերը և այլն և այլն: Բնականաբար հարց է ծագում, թե բանվոր դասակարգն ինչպիսի հարաբերությունների մեջ պետք է լինի այդ տարրերի հետ (1): Եվ—(2)—նա չպե՞տք է արդյոք նրանք հետ միանա արքսոլուտիզմի դեմ ընդհանուր պայքար մղելու համար: Չե՞տր սոցիալ-դեմոկրատները բոլորն ընդունում են, որ Ռուսաստանում քաղաքական ուսուցիչի պետք է նախորդի սոցիալիստական ուսուցիչին. պետք չէ՞ արդյոք, արքսոլուտիզմի դեմ պայքարելու համար քաղաքական բոլոր օպոզիցիոն տարրերի հետ միանալով, առայժմ մի կողմ թողնել սոցիալիզմը, արդյոք այդ պարտադիր չէ՞ արքսոլուտիզմի դեմ պայքարն ուժեղացնելու համար:

Քննենք երկու հարցն էլ:

Ինչ մերաբերում է արքսոլուտիզմի դեմ կովող բանվոր դասակարգի մերաբերումունքին դեպի քաղաքականապես օպոզիցիոն հասարակական մյուս բոլոր դասակարգերն ու խմբակցությունները, ապա այդ միանգամայն ճիշտ որոշված է սոցիալ-դեմոկրատիզմի հիմնական սկզբունքներով, որոնք շարադրված են հոչակավոր «կոմունիստական Մանիֆեստում»: Սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են պրոպագանդայի հասարակական դասակարգերին ընդդեմ ուսուցիչին դասակարգերի, բուրժուազիային՝ ընդդեմ ար-

տոնյալ և դասային հողատիրութեան ներկայացուցիչների և ընդդեմ չինովնիկութեան, խոշոր բուրժուազիային՝ ընդդեմ. մանր բուրժուազիայի ուսուցիչին ձգտումների: Այդ պաշտպանութունը չի ենթադրում և չի պահանջում ոչ մի կոմպրոմիս ոչ-սոցիալ-դեմոկրատական ծրագրերի և սկզբունքների հետ, այդ—դաշնակցի պաշտպանումն է ընդդեմ սոցիալ թշնամու, ընդդեմ սոցիալ-դեմոկրատներն այդ պաշտպանութունը ցույց են տալիս, որպեսզի արագացնեն ընդհանուր թշնամու անկումը, բայց նրանք այդ ժամանակավոր դաշնակիցներից իրենց համար ոչինչ չեն սպասում և նրանք ոչինչ չեն զիջում: Սոցիալ-դեմոկրատները պաշտպանում են ամեն մի ուսուցիչին շարժում ընդդեմ ժամանակակից հասարակակարգի, յուրաքանչյուր ճնշված ժողովրդի, հալածվող կրոն, նվաստացրած դասի և այլն, իրավահավասարութեան համար մղած նրանց պայքարում:

Քաղաքականապես օպոզիցիոն բոլոր տարրերի պաշտպանությունը կարտահայտվի սոցիալ-դեմոկրատներին պրոպագանդայում նրանով, որ ապացուցելով արքսոլուտիզմի թշնամութունը բանվորական գործին, սոցիալ-դեմոկրատները ցույց կտան արքսոլուտիզմի թշնամութունը նաև այս կամ այն հասարակական խմբերին, ցույց կտան բանվոր դասակարգի համերաշխութունը այդ խմբերի հետ այս կամ այն հարցերում, այս կամ այն խնդիրներում և այլն: Արդիտացիայում այդ պաշտպանութունը կարտահայտվի նրանով, որ սոցիալ-դեմոկրատները կօգտվեն արքսոլուտիզմի դատիկանական ճնշման յուրաքանչյուր արտահայտութունից և ցույց կտան բանվորներին, թե ինչպես է այդ ճնշումն ընկնում բոլոր ուսուցիչների վրա ընդհանրապես, և հատկապես ճնշված դասերի, ժողովուրդների, կրոնների, աղանդների ներկայացուցիչների վրա և այլն մասնավորապես, և ինչպես է արտահայտվում այդ ճնշումը բանվոր դասակարգի վրա առանձնապես: Վերջապես, պրակտիկայում այդ պաշտպանութունն արտահայտվում է նրանով, որ ուսուցիչն սոցիալ-դեմոկրատները պատրաստ են դաշինքներ կնքելու այլ ուղղութունների ուսուցիչներին հետ այս կամ այն մասնավոր նպատակներին հասնելու համար, և այդ պատրաստակամութունը բաղմիցս ապացուցված է գործով:

Այստեղ մենք մոտենում ենք նաև երկրորդ հարցին: Մասնանշելով այս կամ այն օպոզիցիոն խմբերի համերաշխութունը բանվորների հետ, սոցիալ-դեմոկրատները միշտ բանվորներին կղատեն, միշտ կպարզաբանեն այդ համերաշխութեան ժամանակա-



վոր և սրբաբանական բնույթը, միշտ կշեշտեն դասակարգային առանձնացումը սլոլեետարիատի, որը կարող է վաղը դառնալ իր այսօրվա դաշնակիցների հակառակորդը: Մեզ կասեն. «այդպիսի մատնանշումը կրուլացնի ներկայումս քաղաքական ազատութեան համար սպառնալից թուր մարտիկներին»: Այսպիսի մատնանշումը կուժեղացնի քաղաքական ազատութեան համար մարտնչող բոլոր մարտիկներին, — կապտատխանները մենք: Ուժեղ են միմիայն այն մարտիկները, որոնք հենվում են որոշ դասակարգերի գիտակցված իրական շահերի վրա, և ամեն մի սըղողման այդ դասակարգային շահերի, որոնք արդեն դերիչսող դեր են խաղում ժամանակակից հասարակութեան մեջ, միմիայն կլիբուլացնի մարտիկներին: Այս առաջին: Իսկ 2-րդ, արսուլուտիզմի դեմ մղվող սպառնալից բանվոր դասակարգը պետք է իրեն զատի, որովհետև միայն նա է արսուլուտիզմի մինչև վերջը հետևողական և անսլայման թշնամին, կոմպրոմիսներ հնարավոր չեն միայն նրա և արսուլուտիզմի միջև, դեմոկրատիզմը միայն բանվոր դասակարգի մեջ կարող է առանց վերանաշուկութունների, առանց անվճարականութեան, առանց հետ նայելու կողմնակից դռներ: Բնակչութեան մյուս բոլոր դասակարգերում, խմբերում, խավերում թշնամութունը դեպի արսուլուտիզմն անսլայման չէ, նրանց դեմոկրատիզմը միշտ հետ է նայում: Բուրժուազիան չի կարող չզիտակցել արդյունաբերական և հասարակական զարգացման կասեցումը արսուլուտիզմի կողմից, բայց նա վախենում է քաղաքական և հասարակական կարգերի լիակատար դեմոկրատացումից և միշտ կարող է արսուլուտիզմի հետ դաշինք կնքել ընդդեմ սլոլեետարիատի: Մանր բուրժուազիան իր իսկ էութեամբ երկերեսանի է, և ձգտելով, մի կողմից, դեպի սլոլեետարիատն ու դեպի դեմոկրատիզմը, նա, մյուս կողմից, ձգտում է դեպի սեռակցիոն դասակարգերը, փորձում է կասեցնել սլոլեետարիատը, ընդունակ է ենթարկվելու արսուլուտիզմի էքսպլեիմենտներին և սերախաղերին (թեկուզ Ալեքսանդր III-ի «ժողովրդական քաղաքականութեան» ձևով), ընդունակ է սլոլեետարիատի դեմ կառավարող դասակարգերի հետ դաշինք կնքելու, իր դրութունը, որպես մանր սեմիակառույցների, ամբողջական համար: Կրթված մարդիկ, ընդհանրապես «ինտելիգենցիան» չի կարող չբոստանալ մարդու միտքն ու գիտելիքը հայրածող արսուլուտիզմի վայրենի ոստիկանական ճնշման դեմ, բայց այդ ինտելիգենցիայի նյութական շահերը կապում են նրան արսուլուտիզմի հետ, բուրժուազիայի հետ, ստիպում են նրան լինել անհետևողական, կոմպրոմիսներ կնքել, իր օպոզիցիոն և

սեռուլեցիոն ալյունը վաճառել կազմունի ուժիկի համար կամ շահութեներին ու դիվիդենդներին մասնակից լինելու համար: Ինչ վերաբերում է ճնշված ժողովուրդներին մեջ և հայրածող դասակարգութուններում դսյութուն ունեցող դեմոկրատիկ տարրերին, այդ ամեն մեկը դիտել ու տեսնում է, որ դասակարգային հակաութունները բնակչութեան այդ կատեգորիաների ներսում շատ ավելի խորը և ավելի ուժեղ են, քան նրան կատեգորիայի բոլոր դասակարգերի համեմատութունն ընդդեմ արսուլուտիզմի և հանուն դեմոկրատական հաստատութունների: Միմիայն սլոլեետարիատը կարող է լինել — և, իր դասակարգային դրութեամբ, չի կարող չլինել — մինչև վերջը հետևողական դեմոկրատ, արսուլուտիզմի վճարական թշնամի, որևէ դիվիդուլթյան, կոմպրոմիսանընդունակ: Միմիայն սլոլեետարիատը կարող է լինել քաղաքական սլոլեետարիատ և դեմոկրատական հաստատութունների համար սպառնալից առաջավոր մարտիկ, որովհետև, առաջին, ոստիկանական ճնշումն ամենից ավելի ուժեղ անդրադառնում է սլոլեետարիատի վրա, չգտնելով ոչ մի կորրեկտիվ այս դասակարգի դրութեան մեջ, որը մուտք չունի ո՛չ դեպի դերադուլթի լիսանութունը, ո՛չ էլ նույնիսկ մուտք ունի չինտելիգենցիայի մոտ և ո՛չ էլ արդեցութուն հասարակական կարծիքի վրա: Իսկ 2-րդ, միմիայն սլոլեետարիատն է ընդունակ մինչև վերջը հասցնելու քաղաքական և հասարակական կարգերի դեմոկրատացումը, որովհետև այդպիսի դեմոկրատացումը այդ կարգերը կհանձնեն բանվորների ձեռքը: Ահա թե ինչու բանվոր դասակարգի դեմոկրատական դրժուկութեան միաձուլումը մնացած դասակարգերի և խմբերի դեմոկրատիզմի հետ կրուլացնելու դեմոկրատական շարժման ուժը, կրուլացնելու քաղաքական սպառնալից, կարգներ այն սլակաս վըճարական, սլակաս հետևողական, կոմպրոմիսներ ավելի ընդունակ: Ընդհակառակը, բանվոր դասակարգի՝ որպես դեմոկրատական հաստատութունների համար մարտնչող առաջավոր մարտիկի զատումը կուժեղացնի դեմոկրատական շարժումը, կուժեղացնի քաղաքական ազատութեան համար մղվող սպառնալից, որովհետև բանվոր դասակարգը մնացած բոլոր դեմոկրատական և քաղաքական օպոզիցիոն տարրերին առաջ կմղի, լիբերալներին կմղի դեպի քաղաքական ռադիկալները, ռադիկալներին կմղի դեպի անդառնալի խզում ժամանակակից հասարակութեան քաղաքական և սոցիալական բոլոր կարգերից: Մենք վերևում ասացինք, որ Ռուսաստանում բոլոր սոցիալիստները պետք է դառնան սոցիալ-դեմոկրատներ: Այժմ մենք ավելացնում ենք. բոլոր իսկական և հետևողա-



հան դեմոկրատները Ռուսաստանում պետք է դառնան սոցիալ-դեմոկրատներ :

Մեր միտքը պարզաբանենք օրինակով : Վերցնենք Հինովնիկոթյան, բյուրոկրատիայի՝ որպես կառավարման դործում մասնագիտացված և ժողովրդի հանդեպ արտոնյալ վիճակի մեջ դրված մարդկանց առանձին խավի հաստատությունը : Մկսած միահեծանական, էկսաստիական Ռուսաստանից մինչև կուլտուրական, ազատ և քաղաքակրթված Անգլիան, մենք ամենուրեք տեսնում ենք այդ հաստատությունը, որը կազմում է բուրժուական հասարակության անհրաժեշտ օրգանը : Ռուսաստանի հետամնացությանն ու նրա արտոլուտիզմին համապատասխանում է ժողովրդի կատարյալ իրավագրիպքյունը Հինովնիկոթյան հանդեպ, արտոնյալ բյուրոկրատիայի կատարյալ անվերահսկելիությունը : Անգլիայում դոկտրինան ունի ժողովրդի շատ խիստ վերահսկողություն կառավարման վրա, բայց այնտեղ ևս այդ վերահսկողությունն ավենվիմ լրիվ չէ, այնտեղ էլ բյուրոկրատիան պահպանում է շատ արտոնություններ, հաճախ ժողովրդի տերն է, ոչ թե ծառան : Անգլիայում էլ մենք տեսնում ենք, որ հասարակական ուժեղ խմբերը պաշտպանում են բյուրոկրատիայի արտոնյալ դրուժյունը, խոչընդոտ են հանդիսանում այդ հաստատության լիակատար դեմոկրատացմանը : Ինչի՞ց է այդ : Նրանից, որ նրա լիակատար դեմոկրատացումը համապատասխանում է միմիայն պրոլետարիատի շահերին . բուրժուակրատի ամենաառաջավոր խավերը պաշտպանում են Հինովնիկոթյան որոշ առանձնաշնորհ իրավունքները (прерогативы), ըմբոստանում են բոլոր Հինովնիկներին ընտրովության դեմ, ցենդի լիակատար վերացման դեմ, Հինովնիկներին անմիջական պատասխանատվության դեմ ժողովրդի առաջ և այլն, որովհետև այդ խավերն զգում են, որ այդպիսի վերջնական դեմոկրատացումից կօգտվի պրոլետարիատն ընդդեմ բուրժուակրատի : Այդպես էլ Ռուսաստանում : Ամենագուր, անպատասխանատու, կաշառակեր, վայրենի, տղետ և պրոտաբուլժ ուսական Հինովնիկոթյան դեմ են դուրս եկել ուս ժողովրդի չափազանց բազմաթիվ ու ամենաբազմազան խավերը : Բայց բացի պրոլետարիատից, այդ խավերից ոչ մեկը թույլ չէր տա Հինովնիկոթյան լիակատար դեմոկրատացում, որովհետև բոլոր մյուս խավերն էլ (բուրժուակրատի, մանր բուրժուակրատի, ընդհանրապես «ինտելիգենցիայի») ունեն որոշ թեկեր, որոնք կապում են նրան Հինովնիկոթյան հետ, որովհետև այդ բոլոր խավերն էլ ուսական Հինովնիկոթյանն ազգակից են : Ո՞վ չգիտե, թե ինչպես հեշտու-

թյամբ է սուրբ Ռուսիայում ինտելիգենտ-ադելիալը, ինտելիգենտ-սոցիալիստը դառնում կայսերական կառավարության չինովնիկ, — Հինովնիկ, որը միևիպարվում է նրանով, թե ինքն «օղուտ» է բերում դրասենեկային ուստինայի սահմաններում, — Հինովնիկ, որն այդ «օղուտով» արդարացնում է իր քաղաքական ինտելիգենտիզմը, իր լակեյությունը մտրակի և խարազանի կառավարության հանդեպ : Միմիայն պրոլետարիատն է անպայման թշնամի արտոլուտիզմին և ուսական Հինովնիկոթյանը, միմիայն պրոլետարիատը չունի ոչ մի բեյ, որ կապեր նրան ազնվական-բուրժուական հասարակության այդ օրգաններին հետ, միմիայն պրոլետարիատն է ընդունակ անհաշտ թշնամության և վճռական պայքարի նրանց դեմ :

Այսպես ցելով, որ իր դասակարգային պայքարում սոցիալ-դեմոկրատիայի կողմից դեկալարվող պրոլետարիատը ուսական դեմոկրատիայի առաջավոր մարտիկն է, մենք այստեղ հանդիպում ենք չափազանց տարածված և չափազանց տարրիկակ այն կարծիքին, թե իբր ուսական սոցիալ-դեմոկրատիան քաղաքական հարցերը և քաղաքական պայքարը հետ է մղում : Ինչպես տեսնում ենք, այդ կարծիքը տրամադժորեն հակառակ է ճշմարտությանը : Իսկ ինչո՞վ բացատրել շատ անզամ շարագրված և արդեն առաջին ուսական սոցիալ-դեմոկրատական հրատարակություններում — «Այստանը Սպաստադրություն»<sup>17</sup> իմբի արտասահմանյան բրոշյուրներում և դրքերում շարագրված՝ սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներն այդպես դարձանալիորեն հհասկանալի : Մեզ թվում է, որ այդ դարձանալի փաստը պետք է բացատրել հետևյալ երեք հանգամանքներով .

Նախ՝ նրանով, որ հին սեռուցիոն թեորիաների ներկայացուցիչներն ընդհանրապես չեն հասկանում սոցիալ-դեմոկրատիզմի սկզբունքները, այն ներկայացուցիչները, որոնք սովոր են դործունեության ծրարքեր և պլաններ կազմելու վերացական գաղափարների հիման վրա, և ոչ թե երկրում դործող իրական դասակարգերը հաշի առնելու հիման վրա, որոնք պատմության կողմից այս կամ այն փոխհարաբերության մեջ են դրված : Հենց այն շահերի այդ սեռալիստական ըննարկման բացակայությունը, որոնք պաշտպանում են ուսական դեմոկրատիային, կարող էր միայն այն կարծիքն առաջ բերել, թե իբր ուսական սոցիալ-դեմոկրատիան սավերում է թողնում ուսական սեռուցիոններին դեմոկրատական խնդիրները :

Երկրորդ՝ նրանով, որ չեն հասկանում, թե անտեսական և



քաղաքական հարցերի, սոցիալիստական և դեմոկրատական դոր-  
ժոնեներթյան միացումը որպես մեկ ամբողջութուն, որպես  
պլուրետարիատի միասնական դասակարգային պայքար ո՛չ թե  
թուլացնում, այլ ուժեղացնում է դեմոկրատական շարժումը և  
քաղաքական պայքարը, վերջինս մոտեցնելով ժողովրդական մաս-  
սաների իրական շահերին, դուրս քաշելով քաղաքական հարցերը  
«ինտելիգենցիայի նեղ կաբինետներին» դեպի փողոց, բանվոր և  
աշխատավոր դասակարգերի միջավայրը, քաղաքական ճնշման  
վերացական գաղափարները վերածելով նրա այն ուսուցիչ-աշխ-  
տություններին, որոնցից ամենից շատ պրոլետարիատն է սու-  
ժում և որոնց հողի վրա սոցիալ-դեմոկրատիան մղում է իր ազի-  
տացիան: Ռուսական ռադիկալին հաճախ թվում է, թե սոցիալ-  
դեմոկրատը, որը փոխանակ առաջավոր բանվորներին ուղղակի և  
անմիջականորեն քաղաքական պայքարի կօչ անելու, դրա փո-  
խարեն մատնանշում է բանվորական շարժման զարգացման, պրո-  
լետարիատի դասակարգային պայքարի կազմակերպական խըն-  
դիրը, — թե այդպիսով սոցիալ-դեմոկրատը ֆախանջում է իր  
դեմոկրատիզմից, հետ է մղում քաղաքական պայքարը: Սակայն  
եթե այստեղ ֆախանջ էլ կա, ապա միայն այնպիսի նահանջ,  
որի մասին Ֆրանսական առածն ասում է «il faut reculer pour  
mieux sauter!» (լավ ցատկելու համար պետք է հեռ-հեռ դնալ):

Երրորդ, թյուրիմացությունն առաջ է եկել նրանից, որ հենց  
«քաղաքական պայքար» հասկացողութունը տարբեր նշանակու-  
թյուն ունի նարոդոլոյականի ու նարոդոպրավականի համար՝ մի  
կողմից, և սոցիալ-դեմոկրատի համար՝ մյուս կողմից: Սոցիալ-  
դեմոկրատներն այլ կերպ են հասկանում քաղաքական պայքարը,  
նրանք այն շատ ավելի լայն են հասկանում, քան հին ուսուցիչն  
թեորիաների ներկայացուցիչները: Մեզ ակնառու պատկերացում է  
տալիս այդ դրության մասին, որը կարող է պարագոքս թվալ,  
«Летучий Листок группы Народной Воли»-ի 1895 թ. դեկտեմ-  
բերի 9-ի № 4-ը: Ամբողջ հոդով ողջունելով այդ հրատարակու-  
թյունը, որը վկայում է մտքի խորը և բեղմնավոր այն աշխատան-  
քի մասին, որ կատարվում է ժամանակակից նարոդոլոյական-  
ների շարքերում, մենք չենք կարող չնշել Պ. Լ. Լավրովի<sup>18</sup> «О  
программных вопросах» հոդվածը (էջ 19—22), որը ցայտուն  
կերպով ցույց է տալիս, որ հին տեսակի նարոդոլոյականներն այլ

Ֆերսը են հասկանում քաղաքական պայքարը\*: «... Այստեղ —  
գրում է Պ. Լ. Լավրովը, խոսելով նարոդոլոյական ծրագրի՝ դե-  
պի սոցիալ-դեմոկրատական ծրագրին ունեցած վերաբերմունքի  
մասին, — էական է միայն և միայն մի բան. հնարավոր է արդյոք  
ուսեղ բանվորական պարտիա կազմակերպելն արսուլուտիզմի ժա-  
մանակ և առանց արսուլուտիզմի դեմ ուղղված ուսուցիչն պար-  
տիա կազմակերպելու» (էջ 21, սյունակ 2). Հենց նույն բանը քիչ  
վերևում (սյունակ 1). «... արսուլուտիզմի տիրապետության ժա-  
մանակ կազմակերպել ուսական բանվորական պարտիա, միա-  
ժամանակ այդ արսուլուտիզմի դեմ չկազմակերպելով ուսուցիչն  
պարտիա»: Մեզ միանգամայն անհասկանալի են Պ. Լ. Լավրովի  
համար այդքան արմատապես էական այդ տարբերությունները:  
Ինչպե՞ս թե: «Բանվորական պարտիա՝ առանց արսուլուտիզմի  
դեմ ուղղված ուսուցիչն պարտիա»: Բայց մի՞թե հենց ինքը  
բանվորական պարտիան ուսուցիչն պարտիա չէ: Մի՞թե նա չի  
ուղղված արսուլուտիզմի դեմ: Այս տարրերնակության բացատրու-  
թյունը տալիս է Պ. Լ. Լավրովի հոդվածի հետևյալ կտորը.  
«Ռուսական բանվորական պարտիայի կազմակերպությունը պետք  
է ստեղծել արսուլուտիզմի դոյության պայմաններում՝ նրա բոլոր  
սքանչելիքներով հանդերձ: Եթե սոցիալ-դեմոկրատներին հաջող-  
վեր այդ բանն անել, միաժամանակ չկազմակերպելով քաղաքա-  
կան դավադրություն<sup>19</sup> արսուլուտիզմի դեմ այդ դավադրության  
բոլոր միջամաններով հանդերձ, ապա, իհարկե, նրանց քաղաքա-  
կան ծրագրերը ուսական սոցիալիստների պատշաճ ծրագրեր կլի-  
ներ, քանի որ բանվորների ազատազրուան իրենց՝ բանվորների  
ուժերով տեղի կունենար: Բայց այդ խիստ կասկածելի է, եթե  
ոչ անհնարին» (էջ 21, սյունակ 1): Ահա թե ի՞նչն է դործի է ու-  
թյունը: Նարոդոլոյականի համար քաղաքական պայքարի հասկա-  
ցողությունը նույնական է քաղաքական դավադրության հասկա-

<sup>18</sup> № 4-ում տպված Պ. Լ. Լավրովի հոդվածը միմիայն մի ճշգրիտ էջ է  
Պ. Լ. Լավրովի «Материалы»-ի համար հատկացված ընդարձակ նամակից:  
Մենք լսել ենք, որ այս ամառ (1897) արտասահմանում լույս են տեսել Պ. Լ.  
Լավրովի նաև այդ նամակը լրիվ ձևով և Պլեխանովի պատասխանը, բայց  
մենք չկարողացանք տեսնել ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Ճիշտ այդպես էլ մեզ  
անհայտ է, թե լույս տեսել է արդյո՞ք «Летучий Листок группы Народной  
Воли»-ի № 5-ը, որի մեջ նարոդոլոյական խոսուցիչ է Պ. Լ. Լավրովի  
նամակի առթիվ մի խմբագրական հոդված դրել: Տե՛ս № 4, էջ 22, սյունակ  
1, ծանոթագրություն:

<sup>19</sup> Ընդգծումը մերն է:





չի բողոքելի, որը պրոլետարիատին զգալ է տալիս ոստիկանական կառավարութեան ծանր թաթը,— նման կաղմակերպութեանը, միևնույն ժամանակ, կհանդիսանար թե՛ մեր պայմաններին հարմարեցրած բանվորական պարտիայի կազմակերպութեան և թե՛ արքայազնի դեմ ուղղված հզոր ռևոլուցիոն պարտիա: Իսկ առաջուց դատել այն մասին, թե այդ կազմակերպութեանն ինչ միջոցի կը իմի արքայազնի վճռական հարված հասցնելու համար, կդերադասի՞ նա արդոք, օրինակ, ապստամբութեանը թե մասսայական քաղաքական գործադուլը կամ գրոհի մի այլ եղանակ,— այդ մասին առաջուց դատելը և ներկայումս այդ հարցը լուծելը կրկին մի դատարկ գոհարինյորութեան: Այդ նման կլինենր այն բանին, որ գեներալները նախքան զորք հավաքելը, նրան մոբիլիզացիայի ենթարկելը և թշնամու դեմ արշավանքի դուրս բերելը, ռազմական խորհուրդ կազմակերպելին: Իսկ երբ պրոլետարիատի բանակն անշեղորեն և ամուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան, ղեկավարութեան պայքար կմղի իր տնտեսական և քաղաքական ազատագրութեան համար,— այն ժամանակ այդ բանակն ինքը ցույց կտա գեներալներին գործողութեան եղանակներ և միջոցներ: Այդ ժամանակ, և միմիայն այդ ժամանակ կարելի կլինի լուծել արքայազնի վերջնական հարված հասցնելու հարցը, որովհետև հարցի լուծումը միայն ինքն է հենց բանվորական շարժման վիճակից, նրա ծավալից, շարժման կողմից մշակված պայքարի եղանակներից, շարժումը ղեկավարող ռևոլուցիոն կազմակերպութեան հատկութեաններից, այն վերաբերմունքից, որ կունենան դեպի պրոլետարիատն ու արքայազնի դեմ մյուս հասարակական տարրերը, արտաքին ու ներքին քաղաքականության պայմաններից,— մի, խոսքով, հազարավոր պայմաններից, որ առաջուց գուշակել և՛ անհնարին է, և՛ անօգուտ:

Ուստի վերին աստիճանի անխրախցի է նաև Պ. Լ. Լավրովի հետևյալ դատողությունը.

«Իսկ եթե նրանք (սոցիալ-դեմոկրատները) հարկադրված լինեն, այսպես թե այնպես, խմբավորել ո՛չ միայն բանվորական ուժերը՝ կապիտալի դեմ կռիվ մղելու համար, այլև համախմբել ռևոլուցիոն անձնավորութեաններին և խմբերին արքայազնի դեմ կռիվում համար, ապա ռուսական սոցիալ-դեմոկրատները փաստորեն (ընդգծումը հեղինակինն է) կընդունեն իրենց հակառակորդների, նարոդովոլյակների ծրագրերը, ինչպես էլ որ նրանք իրենց անվանեն: Համայնքի, Ռուսաստանում կապիտալիզմի բախտի, տնտեսական մատերիալիզմի վերաբերյալ հայացքների

տարբերութեանը մասնակի բաներ են, որոնք իսկական դործի համար չափազանց քիչ կարևորութեան ունեն և նպաստում կամ խանդարում են մասնավոր խնդիրների, հիմնական կետերի պատրաստման մասնավոր եղանակների լուծմանը, բայց ոչ ավելին» (էջ 21, սյունակ 1):

Տարրինակ է նույնիսկ վիճարկել այդ վերջին դրույթը, թե իբր ռուսական կյանքի և ռուսական հասարակութեան զարգացման հիմնական հարցերի վերաբերյալ, պատմութեան լավ բնական հիմնական հարցերի վերաբերյալ հայացքներում եղած տարբերութեանը կարող է վերաբերել միմիայն «մասնակի բաների»: Արդեն վաղուց է ասված, որ առանց ռևոլուցիոն թեորիայի չի կարող նաև ռևոլուցիոն շարժում լինել, և ներկայումս հաղիվ թե կարիք կա այդպիսի ճշմարտութեանն ապացուցելու: Դասակարգային սլայքարի թեորիան, ռուսաց պատմութեան մատերիալիստական լավ բնական և Ռուսաստանի ժամանակակից տնտեսական ու քաղաքական դրույթյան մատերիալիստական զնահատականը, ռևոլուցիոն սլայքարը որոշ դասակարգերի որոշ շահերին հանդեպնելու անհրաժեշտութեան ընդունումը, վերլուծութեան ենթարկելով նրա վերաբերմունքը դեպի մյուս դասակարգերը—այս խոշորագույն ռևոլուցիոն հարցերը «մասնակի բաներ» անվանել,— այն աստիճան հսկայական սխալ և անապասելի բան է ռևոլուցիոն քեռիայի վերաբանի կողմից, որ մենք համարյա պատրաստ ենք այդ տեղը պարզապես lapsus\* համարելու: Իսկ ինչ վերաբերում է քաղված տերադայի առաջին կետին, ապա նրա անխրախցիութեանն է՛լ ավելի ապացուցիչ է: Տպագիր ձևով հայտարարել, թե ռուսական սոցիալ-դեմոկրատները բանվորական ուժերը միմիայն խմբավորում են կապիտալիզմի դեմ պայքարելու (այսինքն՝ միմիայն տնտեսական սլայքարի) համար, չհամախմբելով ռևոլուցիոն անձնավորութեաններին և խմբերին արքայազնի դեմ պայքարելու համար—այդ նշանակում է կամ չլուծել իմաստը ռուսական սոցիալ-դեմոկրատների գործունեութեան մասին եղած հանրածանոթ փաստերը: Կամ, դուք, Պ. Լ. Լավրովը Ռուսաստանում գործնականապես աշխատող սոցիալ-դեմոկրատներին չի՞ համարում «ռևոլուցիոն անձնավորութեաններ» և «ռևոլուցիոն խմբեր»: Կամ (թե ինչև այս ավելի ճիշտ է) արքայազնի դեմ «պայքարել» ասելով նա հասկանում է միմիայն դեմավորութեաններն արքայազնի դեմ: (Հմտ. էջ 21, սյունակ 2.)

\*—սխալանք: խմբ.:

«... գործը վերաբերում է... ռեզոլուցիոն դավադրութեան կազմակերպելուն»։ Ընդդժումը մերն է)։ Գուցե, Պ. Լ. Լապրովի կարծիքով, ով քաղաքական դավադրություններ չի սարքում, նա քաղաքական պայքար էլ չի մղում։ Մեկ էլ ենք կրկնում. այդ հայացքը միանգամայն համապատասխանում է վաղեմի նարոդովոլոյականության վաղեմի տրադիցիաներին, բայց նա բոլորովին չի համապատասխանում ո՛չ քաղաքական պայքարի վերաբերյալ ժամանակակից պատկերացմանը, ո՛չ էլ ժամանակակից իրականությանը։

Մեզ մնում է միջանի խոսք էլ ասել նարոդայրավականների մասին։ Պ. Լ. Լապրովը, մեր կարծիքով, լիովին իրավացի է, ասելով, որ սոցիալ-դեմոկրատները «հանձնարարում են նարոդոպրավականներին, որպես ավելի շիտակների, և պատրաստ են նրանց պաշտպանելու, խմբի աշխոյ, առանց նրանց հետ ձուլվելու» (էջ 19, սյունակ 2)։ պետք էր միայն դրան ավելացնել՝ որպես ավելի շիտակ դեմոկրատների և վոքչափով նարոդոպրավականները հանդես են դալիս որպես հետևողական դեմոկրատներ։ Դժբախտաբար, այդ պայմանն ավելի շուտ մի ցանկալի ապագա է, քան իրական ներկա։ Նարոդոպրավականները ցանկություն հայտնեցին ազատել դեմոկրատական խնդիրները նարոդնիկությունից և առհասարակ «ռուսական սոցիալիզմի» հին ձևերի հետ ունեցած կապից, բայց նրանք ամենևին էլ հետևողական չեյան, երբ բացառապես քաղաքական բարեփոխությունների իրենց պարտիան անվանեցին—«սոցիալակա՛ն (??!)—ռեզոլուցիոն» պարտիա (տե՛ս նրանց «Մանիֆեստը», թվադրված 1894 թ. փետրվարի 19-ին) և իրենց «մանիֆեստում» հայտարարեցին, որ «ժողովրդական իրավունքի հասկացողության մեջ մտնում է ժողովրդական արտադրության կազմակերպումը» (մենք հարկադրված ենք ցիտատներ բերել հիշողությամբ), այդպիսով թագուն մտցնելով նարոդնիկության միևնույն նախապաշարմունքները։ Այդ պատճառով, թերևս, Պ. Լ. Լապրովն այնքան էլ անիրավացի չի եղել, անվանելով նրանց «մասկարադային քաղաքագետներ» (էջ 20, սյունակ 2)։ Սակայն գուցե ավելի արդարացի է նարոդոպրավականության վրա նայել որպես մի անցողիկ ուսմունքի վրա, որին չի կարելի շփերազրել այն ծառայությունը, որ նա ամաչեց նարոդնիկական դոկտրինաների ինքնորինակությունից և բացահայտ ձևով բանավեճի բռնվեց նարոդնիկության այն ամենազարեկի ռեակցիոններն էլ հետ, որոնք օստիկանական դա-

սակարգային արտոլուտիզմի առկայությամբ իրենց թույլ են տալիս խոսել տնտեսական, և ոչ թե քաղաքական բարեփոխությունների ցանկալիության մասին (տես «Народное Право» պարտիայի հրատարակություն «Насущный вопрос»-ը)։ Եթե նարոդոպրավականների պարտիայի մեջ իրոք ոչ ոք չկա, բացի նախկին սոցիալիստներից, որոնք իրենց սոցիալիստական դրոշմը թաքցնում են տակտիկական դիտավորություններով և միմիայն ոչ-սոցիալիստ քաղաքագետների դիմակ են դնում (ինչպես ենթադրում է Պ. Լ. Լապրովը, էջ 20, սյունակ 2)։—այդ դեպքում, իհարկե, այդ պարտիան ոչ մի ապագա չունի։ Սակայն եթե այդ պարտիայի մեջ կան նաև ոչ-մասկարադային, այլ իսկալան ոչ-սոցիալիստ քաղաքագետներ, ոչ-սոցիալիստ դեմոկրատներ, —այդ դեպքում այդ պարտիան կարող է քիչ օգուտ չբերել, աշխատելով մոտենալ մեր բուրժուազիայի քաղաքականապես օպոզիցիոն տարրերի հետ, աշխատելով արթնացնել մեր մանր բուրժուազիայի, մանր առևտրականների, մանր արհեստավորների դասակարգի և նմանների քաղաքական ինքնադիտակցությունը, —այն դասակարգի, որն Արևմտյան Եվրոպայում ամենուրեք դեմոկրատական շարժման մեջ իր դերն է խաղացել, որը մեզ մոտ՝ Ռուսաստանում հետոեֆորմյան դարաշրջանում կուլտուրական և այլ տեսակետից առանձնապես արագ հաջողություններ է ձեռք բերել և որը չի կարող չզդար օստիկանական կառավարության ճնշումը և նրա ցինիկ ռեակցիոնիստները խոշոր գործարանատերերին, ֆինանսական և արդյունաբերական տուղ-մոնոպոլիստներին։ Դրա համար անհրաժեշտ է միայն, որ նարոդոպրավականներն իրենց խնդիր դարձնեն հենց ընակչության տարբեր խավերի հետ մոտենալը, և ոչ թե միշտ սահմանափակվեն նույն այն «ինտելեկտուալիստ», որի անզորությունը մասսաների իրական շահերից կտրված լինելու պայմաններում ընդունում է նաև «Насущный вопрос»-ը։ Դրա համար անհրաժեշտ է, որ նարոդոպրավականները վերջ տան հասարակական այլադան տարրերին միաձուլելու և սոցիալիզմը քաղաքական խնդիրների համեմատությամբ հետազցելու ամեն մի հավակնության, որ նրանք վերջ տան այն կեղծ մոտիին, որն արգելք է հանդիսանում ժողովրդի բուրժուական խավերի հետ մոտենալուն, այսինքն, որ նրանք ո՛չ միայն խոսեն ոչ-սոցիալիստ քաղաքագետների ծրագրի մասին, այլև վարվեն այդ ծրագրի համեմատ, արթնացնելով և զարգացնելով այն հասարակական խմբերի ու դասակարգերի դասակարգային ինքնազիտակցությունը, որոնց համար սոցիալիզմը բոլորովին հարկա-



Վոր չէ, բայց որոնք քանի զնում, այնքան ավելի ուժեղ են դրում արտոլուստիզմի ճնշումը և քաղաքական արատուլթյան անհրաժեշտությունը:

Ռուսական սոցիալ-դեմոկրատիան դեռևս շատ երիտասարդ է: Նա նոր-նոր է դուրս գալիս այն սաղմային վիճակից, երբ դերիշխող տեղ էին ձևավորում թեորիական հարցերը: Նա իր պրակտիկ գործունեությունը դեռ նոր է սկսում ծավալել: Սոցիալ-դեմոկրատական թեորիաների և ծրարների քննադատությունն փոխարեն մյուս Ֆրակցիաների ուղղություններն արեւելք է, անհրաժեշտութեն, հանդես դան քննադատելու ուսական սոցիալ-դեմոկրատների պրակտիկ գործունեությունը: Եվ պետք է խոստովանել, որ այս վերջին քննադատությունն ամենախիստ կերպով տարբերվում է թեորիական քննադատությունից, այնքան է տարբերվում, որ հնարավոր եղավ մի այնպիսի դավեշտական լուր հնարել, թե իբր Ս.Պետերբուրգի «Պայքարի միությունը» սոցիալ-դեմոկրատական կարմակերպություն չէ: Ինքնին նման լուրի հնարավորությունն արդեն ցույց է տալիս, որ քաղաքական պայքարն անտեսելու վերաբերյալ սոցիալ-դեմոկրատների մասին տարածված մեղադրանքները ճիշտ չեն: Այդպիսի լուրի հնարավորությունն իսկ արդեն վկայում է, որ շատ ուղղություններ, որոնց չկարողացավ համոզել սոցիալ-դեմոկրատների թեորիան, սկսում են համոզվել նրանց պրակտիկայով:

Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջ աշխատանքի գեռևս հսկայական, հաղիվ սկսված դաշտ կա: Ռուսական բանվոր դասակարգի դարթոնքը, նրա տարերային ճարտումը դեպի գիտությունը, դեպի միավորումը, դեպի սոցիալիզմը, դեպի պայքարն իր շահագործողների և ճնշողների դեմ՝ երևան է գալիս օրեցօր ավելի լայն ու ցայտուն կերպով: Այն հսկայական հաջողությունները, որ վերջերս ունի ուսական կապիտալիզմը, երաշխիք են, որ բանվորական շարժումն անդադար աճելու է լայնությամբ ու խորությամբ: Ներկայումս մենք, ըստ երևութին, ապրում ենք կապիտալիստական ցիկլի այն շրջանը, երբ արդյունաբերությունը «ծաղկում է», աշխուժ առևտուր է տեղի ունենում, գործարաններն ամբողջ ուժով աշխատում են, և անձրևից հետո բուսնող սնկի պես երևան են գալիս անթիվ նոր գործարաններ, նորանոր ձեռնարկություններ, բաժնետիրական ընկերություններ, երկա-

թուղային կառուցվածքներ և այլն և այլն: Չպետք է մարդարեւ լինել՝ նախադուշակելու համար այն (ավելի կամ պակաս սաստիկ) փլուզումի անխուսափելիությունը, որը հաջորդելու է արդյունաբերության այդ «ծաղկմանը»: Այդպիսի փլուզումը քայքայելու է մանր տնտեսատերերի մասսաներին, բանվորական մասսաներին գործազուրկների շարքն է դրելու, այդպիսով, բանվորական բուլուր մասսաների առաջ սուր ձևով դնելու է սոցիալիզմի և դեմոկրատիզմի այն հարցերը, որոնք վաղուց արդեն կանգնած են յուրաքանչյուր դիտակից, յուրաքանչյուր մտածող բանվորի առաջ: Ռուսական սոցիալ-դեմոկրատները պետք է հույան այն մասին, որ ուսական պրոլետարիատն այդ փլուզումի ժամանակ լինի ավելի գիտակից, ավելի միավորված, հասկանա ուսական բանվոր դասակարգի խնդիրները, ընդունակ լինի հակահարված տալու կապիտալիստների դասակարգին, որոնք ներկայումս հսկայական օգուտներ են քաղում և աշխատում են շարունակ վնասները բանվորների վրա բարդել, — ընդունակ լինի ուսական դեմոկրատիայի գլուխն անցած վճռական պայքարի բռնվելու ոստիկանական աքսորուստիզմի դեմ, որը ուսական բանվորների և ամբողջ ուս ժողովրդի ձեռք ու ոտքը կաշկանջում է:

Այսպես, ուրեմն, ընկերներ, անցնենք աշխատանքի: Թանգազին ժամանակը չկորցնենք: Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջ հսկայական գործ-կա մատարելու՝ արթնացող պրոլետարիատի պահանջները բավարարելու, բանվորական շարժումը կադմակերպելու, ուղղություն խմբերն ու նրանց փոխադարձ կապն ամրապնդելու, բանվորներին պրոպագանդիստական և ագիտացիոն գրականություն հարթալթելու, Ռուսաստանի բոլոր ծայրերում ցրված բանվորական խմբակները և սոցիալ-դեմոկրատական խմբերը միասնական սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի մեջ համախմբելու համար:



## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻՆ «ՊԱՅԳԱՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ

Պետերբուրգի ուսուցիչներն են ծանր ժամանակներ են ապրում: Կառավարութիւնը կարծես թէ իր բոլոր ուժերը հավաքել է, որպէսզի ճզմի նորերս ծագած և այնպիսի ուժով արտահայտված բանվորական շարժումը: Ձերբակալութիւններն արտասովոր չափեր են բնորոշել, բանտերը լիքն են: Բռնում են ինտելիգենտներին, տղամարդկանց ու կանանց, բռնում և մասսայաբար արսորում են բանվորներին: Համարյա յուրաքանչյուր օրը տեղեկութիւն է բերում ոստիկանական կառավարութեան նորանոր դոճերի մասին, կառավարութեան, որը կատաղաբար հարձակվել է իր թշնամիները վրա: Կառավարութիւնն իր առաջ խնդիր է դրել թույլ չտալ, որ ամբանա և ոտքի կանգնի ուսական ուսուցիչներ շարժման նոր հոսանքը: Դատախազներն ու ժանդարմներն արդեն պարծենում են, որ իրենց հաջողվել է ջախջախել «Պայքարի միութիւնը»:

Այս պարծենկոտութիւնը սուտ է: «Պայքարի միութիւնը», չնայած բոլոր հալածանքներին, անվնաս է: Լիակատար դոճունակութեամբ մենք արձանագրում ենք, որ մասսայական ձերբակալութիւններն իրենց ծառայութիւնն են մատուցում, հանդիսանալով ազիտացիայի հզոր դրոճիք բանվորներին մեջ և ինտելիգենտ-սոցիալիստներին մեջ, որ կորուստի մատնված ուսուցիչներն իր վերաբերման առաջ են դնելիս նորերը, որոնք պատրաստ են թարմ ուժերով կանգնել ուսական պրոլետարիատի և ամբողջ ուսուցիչ ժողովրդի համար պայքարող մարտիկները շարքերում: Առանց զոճերի պայքար չի կարող լինել, և ցարական բաշիրողուկները դադանային հալածանքներին մենք հանդիստ կերպով պատասխանում ենք. ուսուցիչներն են կորան—կեցցե՛ ուսուցիչան:

Հետապնդումների ուժեղացումը մինչև այժմ ի վիճակի եղաւ

առաջ բերելու «Պայքարի միութեան» առանձին ֆունկցիաների ժամանակավոր թուլացում միայն, դործակալները ու ազիտատորները ժամանակավոր պակասութիւն միայն: Հենց այդպիսի պակասութիւն է դրացիում այժմ և մեզ ստիպում է կոչ անել բոլոր ազիտակից բանվորներին և բոլոր այն ինտելիգենտներին, որոնք ցանկանում են իրենց ուժերը դնել ի սպաս ուսուցիչներն դործին: «Պայքարի միութեանը» դործակալներ են հարկավոր: Թող բոլոր այն խմբակները և բոլոր առանձին անձերը, որոնք ցանկանում են աշխատել ուսուցիչներն դործունեութեան որևէ, թեկուզ ամենանեղ ոլորտում, հայտենն այդ մասին նրանց, ովքեր հարաբերութեան մեջ են «Պայքարի միութեան» հետ: (Այն դեպքում, եթե որևէ խումբ չի կարողացել այդպիսի անձեր գտնել,—մի բան, որը շատ քիչ հավանական է,—կարող է դիմել արտասահմանյան «Ռուսական սոցիալ-դեմոկրատները միութեան» միջոցով): Աշխատողներ հարկավոր են ամեն տեսակ աշխատանքների համար, և որքան ավելի խիստ մասնագիտանալ ուսուցիչներն են ուսուցիչներն դործունեութեան առանձին ֆունկցիաների մեջ, որքան ավելի խիստ խորհեն նրանք իրենց դործի կոնսպիրատիվ եղանակները ու քոչարկումների մասին, որքան ավելի անձուրաց կերպով պարփակվեն փոքրիկ, աննկատելի, մասնակի աշխատանքի մեջ,—ամբողջ դործն այնքան ավելի հուսալի կլինի, այնքան ավելի դժվար կլինի ժանդարմների ու լրտեսների համար ուսուցիչներն ին հայտնաբերելը: Կառավարութիւնն արդեն վաղորդ իր դործակալները ցանցով պատել է հակաուսուցիչական տարրերի ոչ միայն ներկայիս, այլև հնարավոր, հավանական օջախները: Կառավարութիւնն անշեղորեն զարգացնում, լայնացնում և խորացնում է իր ծառաների դործունեութիւնը, որոնք հալածում են ուսուցիչներն ին, նոր պրիմներ է հնարում, նոր պրոֆուկատորներ է նշանակում, աշխատում է ճնշում դործադրել ձերբակալվածները վրա ահաբեկումների, կեղծ ցուցմունքներ, կեղծ ստորագրութիւններ ներկայացնելու, կեղծ դրութիւններ նետելու և այլ միջոցներով: Առանց ուժեղացնելու և զարգացնելու ուսուցիչներ կարգապահութիւնը, կազմակերպութիւնն ու կոնսպիրացիան՝ անկարելի է պայքարել կառավարութեան դեմ: Իսկ կոնսպիրացիան ամենից առաջ պահանջում է, որ առանձին խմբակներն ու անձերը մասնագիտանալ աշխատանքի առանձին ֆունկցիաների մեջ, և միացուցիչ դերը հատկացվի «Պայքարի միութեան»՝ անդամների թվով ամենաանշան կենտրոնական կորիզին: Ռեուցիոն աշխատանքի առանձին ֆունկցիաները խիստ



բաղման են. հարկավոր են լեզու աղիտատորներ, որոնք կարողանան բանավորների հետ խոսել այնպես, որպեսզի նրանց կարելի չլինի դրա համար դատի տալ, որոնք կարողանան ասել միայն A, թողնելով, որ մյուսներն ասեն B և C: Հարկավոր են գրականութուն և թուղթիկներ տարածողներ: Հարկավոր են բանավորական խմբակներ և խմբեր կազմակերպողներ: Հարկավոր են բոլոր ֆարքիկաներից ու դործարաններից բոլոր դեպքերի մասին տեղեկություններ հաղորդող թղթակիցներ: Հարկավոր են մարզիկ, որոնք հետևեն լրտեսներին ու սլոպիկատորներին: Հարկավոր են կոնսպիրատիվ բնակարաններ սարքողներ: Հարկավոր են մարզիկ գրականութուն հանձնելու, հանձնարարութուններ անելու, ամեն տեսակ հարաբերութունների համար: Հարկավոր են փող դանձողներ: Հարկավոր են ինտելիգենցիայի ու չինոյիսիկուլյան մեջ աշխատող գործակալներ, որոնք շփում են բանավորների հետ, Փարբիկա-գործարանային կենցաղի հետ, ազմինխարացիայի հետ (վոստիկանության, գործարանային տեսչության հետ և այլն): Հարկավոր են մարզիկ Ռուսաստանի և մյուս երկրների դանազան քաղաքները հետ հարաբերութուններ պահպանելու համար: Հարկավոր են մարզիկ ամեն տեսակ գրականութուն մեխանիկոսներ վերադարձնելու զանազան միջոցներ սարքելու համար: Հարկավոր են մարզիկ գրականութուն և այլ բաներ պահելու համար և այլն: Որքան ավելի փոքր, ավելի մանր լինի այն գործը, որը կստանանք առանձին անձը կամ առանձին խումբը, — այնքան ավելի շանտեր կլինեն, որ նրան կհաջողվի մտածված կերպով կազմակերպել այդ գործը և որքան կարելի է այն ապահովել ճախողումից, քննարկել կոնսպիրատիվ բոլոր մանրամասները, գործադրելով ժանդարմների աչալընթությունը խաբելու և նրանց մոլորության մեջ գցելու ամեն տեսակ միջոցներ, այնքան ավելի հուսալի կլինի դործի հաջողութունը, այնքան ավելի դժվար կլինի ոստիկանության ու ժանդարմների համար հետևել ուղեցիտներին և կազմակերպության հետ ունեցած նրա կապին, այնքան ավելի հեշտ կլինի ուղեցիտն պարտիայի համար կորուստյան մատնված գործակալներին ու անդամներին փոխարինել ուրիշներով՝ առանց դործին վնաս հասցնելու: Մենք դիտենք, որ աչքալիսի մասնադիտացումը շատ դժվար բան է, դժվար է, որովհետև դա մարդուց պահանջում է խիստ մեծ տոկոսություն և առավելագույն անձնվիրություն, պահանջում է բոլոր ուժերը նվիրել աննկատելի աշխատանքին, որը միապաղաղ է, դուրիքը կերպի հետ հարաբերութուններից, որ ուղեցիտների ամբողջ

կյանքը ենթարկում է չոր և խիստ ուղեցիտացիայի: Բայց միայն այս պայմաններում է Ռուսաստանում ուղեցիտն պրակտիկայի կորիֆեյներին հաջողվել իրադործել ամենավիթխարի ձեռնարկումները, տարիներ ծախսելով գործը համակողմանիորեն նախապատրաստելու վրձ, և մենք խորը կերպով համոզված ենք, որ սոցիալ-դեմոկրատները պակաս անձնվիրություն չեն ցուցաբերի, քան նախորդ սերունդների ուղեցիտները: Մենք դիտենք նաև, որ մեր առաջարկած սխտեմով շատ անձերի համար, որոնք բուռն կերպով ձգտում են իրենց ուժերը գործադրել ուղեցիտն աշխատանքի ասպարեզում, շատ ծանր կլինի այն նախապատրաստական շրջանը, մինչև որ «Պայքարի միութունը» հարկեզած տեղեկություններ կհավաքի իր ծառայութուններն առաջարկող անձի կամ խմբի մասին և կփորձի նրա ընդունակութունն առանձին հանձնարարութունների միջոցով: Բայց առանց այդպիսի նախնական փորձարկման ժամանակակից Ռուսաստանում ուղեցիտն գործունեութուն հնարավոր չէ:

Մեր նոր ընկերներին առաջարկելով գործունեության այսպիսի սխտեմ, մենք այնպիսի սկզբունքներ ենք արտահայտում, որոնց մեզ հասցրել է երկարատև փորձը, խորապես համոզված, որ ուղեցիտն աշխատանքի հաջողութունն ամենից ավելի ապահովված է այդ սխտեմի ժամանակ:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> «Ի՞նչ անել»—Լենինի գիրքը, որ գրվել է 1901—1902 թ.թ. աշնանն ու ձմեռը և առաջին անգամ լույս է տեսել արտասահմանում, Շտուտգարտում, 1902 թ. մարտին:

«Համկ(բ)» պատմության համառոտ դասընթացի» մեջ տրված է Լենինի այս գրքի հետևյալ բնութագրերը.

«Ի՞նչ անելի» պատմական նշանակությունն այն է, որ Լենինն իր այդ նշանավոր գրքում՝

1) մարքսիստական մտքի պատմության մեջ առաջինն էր, որ մինչև արժատները մերկացրեց օպորտունիզմի իդեական ակունքները, ցույց տալով, որ նրանք կայանում են ամենից առաջ բանվորական շարժման տարերայնության առջև խոնարհվելու մեջ և բանվորական շարժման մեջ սոցիալիստական դիտակցության դերը ստորացնելու մեջ.

2) իր բարձրության վրա դրեց թեորիայի, դիտակցականության, պարտիայի՝ որպես բանվորական տարերային շարժումը ուղղուցիտացնող և դեկավարող ուժի նշանակությունը.

3) փայլուն կերպով հիմնավորեց մարքսիստական հիմնական այն դրույթը, որն ասում է, թե մարքսիստական պարտիան բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ.

4) ամեն մարքսիստական պարտիայի իդեոլոգիական հիմքերի հանճարեղ մշակումը:

«Ի՞նչ անելում» զարգացված թեորիական դրույթները հետագայում գրվեցին բոլշևիկյան պարտիայի իդեոլոգիայի հիմքում» («Համկ(բ)» պատմության համառոտ դասընթաց», էջ 52):—3:

2 «Էկոնոմիզմ»—օպորտունիստական հոսանք բանվորական շարժման մեջ 90-ական թվականների վերջում: «Էկոնոմիստները» հանդես էին դալիս ընդդեմ ուղղուցիտ մարքսիզմի և պահանջում էին հրաժարվել պրոլետարիատի ինքնուրույն զաղաքական պարտիա ստեղծելուց, բանվոր դասակարգի ինքնուրույն զաղաքական պայքարից: Նրանք զտնում էին, որ զաղաքական պայքարը լիբերալ բուրժուազիայի դործն է, իսկ ինչ վերաբերում է բանվորներին, ապա նրանց բավական է նաև դործատերերի դեմ մղվող տնտեսական պայքարը: Լենինը «Էկոնոմիզմի» ծագման հենց սկզբից անխնա պայքար էր մղում նրա՝ որպես բուրժուական ազդեցությունը բանվոր դասակարգի մեջ տարածող հոսանքի դեմ:—4:

3 Սոցիալիստ-ուղղուցիտներ (կրճատ՝ էսերներ)—մանր-բուրժուական,



Հակամարտութեան, կուլիային, կոնտրոլուցիոն պարտիա: Առաջ է եկել XX դարի սկզբում քայքայող նարոդնիկական խմբերից: Անհատական տեղուրի իր տակիկայով այդ պարտիան արգելակում էր բանվորներին ու դյուզա-ցիներին ռեւոլուցիոն ակտիվութեան զարգացումը և կանգաբար էր ցարկովի ու կապիտալիզմի դեմ նրանց մղած մասսայական պայքարին: 1917 թ. էսերները ակտիվորեն օժանդակում էին կոնտրոլուցիոն բուրժուական Ժամանակավոր կառավարութեանը և պաշտպանում էին կալվածատերերի ու կապիտալիստների շահերը: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեւոլուցիայի հաղթանակից հետո նրանք, տրոցկիստներին ու բուխարինականներին հետ դաշնակցած, զավազրու-թյուններ էին սարքում սովետական իշխանութեան դեմ, մահափորձեր էին կատարում ռեւոլուցիայի առաջնորդներին կյանքի դեմ և սպիտակ-գլխարկիական-ներին ու ինտելիկտներին հետ միասին փորձում էին Ռուսաստանում վերա-կանգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանութեանը:—5:

4 «Искра»—ռեւոլուցիոն մարքսիստների առաջին համառուսական լրագիրը, որը արտասահմանում ստեղծեց Լենինը և որը դադարեցրեց ռուսերի մեջ Ռուսաստան: Առաջին համարը լույս տեսավ 1900 թ. դեկտեմբերին: Լենինյան «Искра»-ն հսկայական պատմական դեր խաղաց, նախապատրաստելով պրոլե-տարիատի ինքնուրույն քաղաքական պարտիայի ստեղծումը: «Искра»-ն անխնայաբար էր մղում «էկոնոմիզմի» դեմ, — որ մի օպորտունիստական հոսանք էր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, — և բանվոր դասակարգին թշնամի մյուս ուղղութեաններին դեմ: «Искра»-ն նախապատրաստեց պարտիայի II համազու-մարը:

«Искра»-յի խմբագրութեան կազմի մեջ սկզբում, բացի Լենինից, մտնում էին Պլեխանովը, Մարտովը, Պոտրեսովը, Աբսելրովը և Ջասուլիչը, որոնց օպորտունիստական տատանումները դեմ Լենինը ստիպված էր մշտապես պայքարել: Մրանք բոլորն էլ հետագայում գլխավորեցին մենշևիզմը:

ՌՍԳԲԳ II համառումարը «Искра»-ն հաստատեց որպէս պարտիայի կենտ-րոնական օրգան և ընտրեց Լենինից, Պլեխանովից և Մարտովից կազմված խմբագրութեան: Սակայն Մարտովը, որ II համառումարում դարձավ փոքրա-մասնութեան լիդերը, հրաժարվեց մտնել խմբագրութեան կազմի մեջ: II համա-զումարից հետո շուտով Պլեխանովը, որը նույնպէս անցավ մենշևիկների կող-մը, ինքնազուլուկ կերպով «Искра»-յի խմբագրութեան կազմի մեջ կոպտա-ցիայի ենթարկեց համազումարի կողմից չընտրված մենշևիկներ Աբսելրովին, Պոտրեսովին և Ջասուլիչին: Նկատի ունենալով, որ մենշևիկները սպորտինի կերպով դավթել են լրատիրը, Լենինը 1903 թ. նոյեմբերին դուրս եկավ խմբա-գրութեան կազմից, և 52-րդ համարից լրագիրը, պահպանելով նախկին անու-նը, դարձավ մենշևիկների օրգանը: Այդ Ժամանակից պարտիայի մեջ սկսեցին խռովել իմ «Искра»-յի՝ որպէս Լենինյան, բուլշևիկյան «Искра»-յի մասին և նոր «Искра»-յի՝ որպէս մենշևիկյան, օպորտունիստական «Искра»-յի մասին» («Համի(բ)Պ պատմութեան համառոտ դասընթաց», էջ 61):

Լեֆիգյան «Искра»-յի դերի մասին «Համի(բ)Պ պատմութեան համառոտ դասընթացի» մեջ ասվում է. «Искра»-յի առաջին համարների լույսընծայումը (1900—1901) հանդիսացավ անցում դեպի նոր շրջանը—անլատ—անլատ խմբերից ու խմբակներից Ռուսաստանի միասնական սոցիալ-դեմոկրատական բանվորա-կան պարտիան իսկապէս կազմելու շրջանը» (նույն տեղում, էջ 36):—5:

5 «Революционная Россия»—էսերների պարտիայի օրգան, լույս էր տես-նում 1900—1905 թ.թ.:—5:

6 ժխալալսիկի և (Գրիգորովիչ) — նարոդնիկ, էսերների պարտիայի թեորե-տիկներից մեկը:—5:

7 «Освобождение» — լիբերալ բուրժուազիայի կողմից 1902—1905 թ.թ. արտասահմանում հրատարակվող ժուռնալ:—5:

8 Սարուվե Պ. Բ. (ծնված 1870) — չեղալ մարքսիստ: Անցյալ դարի 90-ա-կան թվականների լեզու մարքսիստական մամուլում նա ազդված էր մարք-սիզմը բուրժուական լիբերալիզմի ոգով: Սարուվիզմը Լենինի ընդթափելի հա-մաձայն «մարքսիզմի արտացոլումն էր բուրժուական դեականութեան մեջ»: Հետագայում Սարուվեն դարձավ ակտիվ սպիտակ-գլխարկիական:—7:

9 Բեքմիշտայնիակառուցումը—օպորտունիստական հոսանք, որը կապված է դերմանական օպորտունիստ կղզուարդ Բեքմիշտայնի անվան հետ, որը Լենինի մահվանից հետո, 90-ական թվականների վերջում, հանդես եկավ ընդդեմ մարքսիզմի հիմնական դրույթներին, փորձելով դուրս դրել նրանից նրա ռեւո-լուցիոն լոյանդակութեանը, պրոլետարական ռեւոլուցիայի և պրոլետարիատի գլխատուրայի ուսմունքը և բանվորական շարժումը ենթարկել բուրժուազիա-լի շահերին ու ազդեցութեանը: «էկոնոմիստները», իսկ այլևի ուղ մենշևիկ-ները փորձում էին բերնաշառնականութեանը փոխադրել ռուսական հողը:—7:

10 «Угнетал-դեմոկրատիայի երկու տակիկան դեմոկրատական ռեւոլուցիայի մեջ» — Լենինի գիրքը, որը լույս տեսավ 1905 թ. հուլիսին ժընևում: «Լենինի այս աշխատութեան պատմական նշանակութեան ամենից առաջ այն է, աս-վում է «Համի(բ)Պ պատմութեան համառոտ դասընթացի մեջ», — որ նա իդեա-լայն ջանքերից մենշևիկներին մանր-բուրժուական տակիկական դիրքավորու-մը, Ռուսաստանի բանվոր դասակարգին զինեց բուրժուա-դեմոկրատական ռեւո-լուցիայի հետագա ծավալման համար, ցարկովի վրա նոր դրոճ կատարելու հա-մար և ռուսական սոցիալ-դեմոկրատներին տվեց բուրժուական ռեւոլուցիան սոցիալիստական ռեւոլուցիայի վերածելու անհրաժեշտութեան պարզ հե-ռանկարը:

Բայց Լենինի աշխատութեան նշանակութեանը սրանով չի սպառվում: Նրա անդհանհատելի նշանակութեանն այն է, որ նա մարքսիզմը հարստացրեց ռեւո-լուցիայի նոր թեորիայով և բուլշևիկյան պարտիայի այն ռեւոլուցիոն տակիկ-այի հիմքերը դրեց, որի օգնութեամբ մեր երկրի պրոլետարիատը 1917 թվա-կանին հաղթանակ տարավ կապիտալիզմի դեմ» («Համի(բ)Պ պատմութեան համառոտ դասընթաց», էջ 103):—9:

11 ՌՍԳԲԳ երրորդ համագումարը—համազուլեց Լոնդոնում Լենինի ու բուլշ-վիկների նախապատրաստական մեծ աշխատանքի հետևանքով: Համազումարի աշխատանքները տեղի էին ունենում 1905 թ. ապրիլի 12—17-ը: Համազումար-ը դուրս բուլշևիկյան էր: Մենշևիկյան կոմիտեներից ընտրված դեյեղատները հրաժարվեցին համազումար գալուց և մեկնեցին ժընև մենշևիկյան «Искра»-յի կազմակերպած կոնֆերենցիան: III համազումարում ներկայացված էին պար-տիայի լուրջ խոչըրագույն կազմակերպութեանները: Համազումարը հսկայա-կան նշանակութեան ունեցավ մեր պարտիայի պատմութեան համար, որովհետև այդ համազումարը դուրսարվեց ռուսական առաջին ռեւոլուցիայի վերելքի շրջ-ջանում:—9:



12 «Пролетарий»—ՌՄԴԳ կենտրոնական օրգանը, որը լույս էր տեսնում արտասահմանում Լենինի խմբագրությունում 1905 թ. մայիսի 27-ից մինչև նոյեմբերի 25-ը: Ընդամենը լույս է տեսել 26 համար:—9:

13 «Народное право» պարտիա-մանր-բուրժուական ինտելիգենցիայի մի խումբ, որը հիմնեցին 1893 թ. նարոդնիկներ Նաթանսոնը, Ապտեկմանը և ուրիշները: Այդ պարտիան հրատարակեց իր «Манифест»-ը և ծրագրային մի բրոշյուրը «Насущный вопрос» վերնադրով: 1894 թ. Վախճախվեց ոստիկանություն կողմից: Նարոդոպրավականները մեծ մասը հետագայում մտավ էսերներին պարտիայի մեջ:—11:

14 «Народная воля» խումբ—կազմակերպվել է 1891 թ.: Նրա կազմի մեջ մտնում էին Մ. Ալեքսանդրովը (Օլմիսկի), Ե. Ալեքսանդրովան, Ն. Մեշչերյակովը և ուրիշները: Նա ուներ իր սպարանը, հրատարակում էր մի շարք բրոշյուրներ, ու պրոկլամացիաներ, «Рабочий сборник»-ը և «Летучий листок»-ի երկու համարը: 1894 թ. այս խումբը ոստիկանության կողմից Վախճախվեց: Խմբի անդամների մի մասը անցավ սոցիալ-դեմոկրատներին շարքը:—11:

15 «Работник»—ոչ-պարբերական ժողովածու, որ լույս էր տեսնում 1896—1899 թ.թ. արտասահմանում «Աշխատանքի ազատագրություն» խմբի խմբագրությունում: Ընդամենը լույս տեսավ վեց համար՝ երեք զբոսի մեջ:—11:

16 «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միութուն»—հիմնվել է Լենինը 1895 թ. Պետերբուրգում: Միութունն առաջին անգամը միավորեց Պետերբուրգի մարքսիստական բոլոր անջատ-անջատ խմբակները և կազմեց մի կենտրոնացված կազմակերպություն: Միութունը առաջին անգամը Ռուսաստանում իրագործեց սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ և Ռուսաստանում իսկական մարքսիստական պարտիայի սաղմը հանդիսացավ:—11:

17 «Աշխատանքի ազատագրություն» խումբ—ռուսական սոցիալ-դեմոկրատական առաջին կազմակերպությունը, որ հիմնեց արտասահմանում Գ. Պլեխանովը 1883 թ.: Խմբի մեջ մտնում էին Գ. Պլեխանովը, Պ. Աքսելրոդը, Վ. Չասուլիչը, Լ. Գեյչը և Վ. Իզնատովը: Խմբի ծառայությունն այն է, որ նա մեծ աշխատանք կատարեց Ռուսաստանում մարքսիզմը տարածելու գործում, նարոդնիկներին սխալ և վնասակար հայացքներին դեմ պայքարելու գործում:—23:

18 Լավրով Պ. Լ. (1823—1900)—նարոդնիկության ամենատեսակետի թեորետիկն ու իդեոլոգը:—24:

19 Բլանկիզմ—քաղաքական ուղղություն, որը կապված է Ֆրանսիացի ռևոլյուցիոն և սոցիալիստ Օգյուստ Բլանկիի անվան հետ, որը եղել է փարեյզյան բանվորներին անցյալ դարի բազմաթիվ ապստամբություններին ողնչնողն ու մասնակիցը: «Բլանկիզմ»-ը դրել է Լենինը—մարդկության փրկությունը վարձու ստրկությունից սպասում է ոչ թե դասակարգային պայքարի միջոցով, այլ փոքր ինտելիգենտական փոքրամասնության դավադրության միջոցով:—26:

20 1897 թ. հունիսի 2-ի օրենքը—Փարբիկաներում ու գործարաններում բանվորական օրը կրճատելու ու 11½ ժամի հասցնելու և կիրակնօրյա հանգիստ սահմանելու վերաբերյալ այս օրենքը ցարական կառավարությունը հրատարակեց մասսայական գործադուլներին աղղեցություն լույս տեսնող 1896 թ. դարձանք:—27:

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

«Ռուսական սոցիալ-դեմոկրատներին խնդիրները» բրոշյուրի երկրորդ հրատարակության առաջաբանը . . . . .	3
«Ռուսական սոցիալ-դեմոկրատներին խնդիրները» բրոշյուրի երրորդ հրատարակության առաջաբանը . . . . .	9
Ռուսական սոցիալ-դեմոկրատներին խնդիրները . . . . .	11
Պետերբուրգի բանվորներին ու սոցիալիստներին «Պայքարի միություն» կողմից . . . . .	34
Մասնավորություններ . . . . .	39



ИИВ. № 1864

Մտիլիտտական համեմատությունը կատարեց Վ. Փոքեյան  
Տպագրված է Ս. Հակոբյանի հսկողությամբ  
Տեխ. խմբագիր Ս. Խաչատրյան  
Մրբագրիչ Ա. Մանուկյան  
Կոնսերու սրբագրիչ Լ. Արսլյան

Հրատարակչության № 834, պատկեր № 296, заказ № 296  
Տիրաժ 3000, тираж 3000  
Հանձնվել է արտադրության 18/IX 1940 թ.  
Ստորագրված է տպագրելու 23/X 1940 թ.  
Գինը 80 կ., цена 80 к.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության  
տպարան, Երևան, Ալլախանյանի № 65

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллаханян № 65

ՀՆ 2017

1947 г.  
Ант № 118  
Вкладн. л.

«Ազգային գրադարան»



NL0178113

ԳՐԱԸ 80 Կ.

1103

Арм.

3-5110a

**В. И. ЛЕНИН  
ЗАДАЧИ РУССКИХ  
СОЦИАЛ-ДЕМОКРАТОВ**

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1940